ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր

30.07.2025թ.

ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալ,
ՀՀ Ազգային ժողովի նախագահի պաշտոնակատար
պարոն Ռուբեն Ռուբինյանին

Հարգելի պարոն Ռուբինյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ հոդվածով, «Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Անասնաբուժության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեղական տուրքերի եվ վճարների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում» փոփոխություն կատարելու մասին, «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին, «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքների նախագծերը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կցվում են.

1. Օրենքների նախագծերը (հիմնական զեկուցող՝ Մերի Գալստյան)
2. Օրենքների նախագծերի ընդունման հիմնավորումը
3. Գործող օրենքների փոփոխվող հոդվածների վերաբերյալ տեղեկանքները

Խնդրում եմ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝

Մերի Գալստյան

Արուսյակ Մանավազյան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող, ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային կամ ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիների հետ կապված իրավահարաբերությունները:

Սույն օրենքի գործողությունը չի տարածվում գյուղատնտեսական, (բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի), որսի, ինչպես նաև մարդու կենսագործունեության վրա վնասակար ազդեցություն ունեցող կենդանիների (վնասատու կրծողներ, միջատներ և այլն) հետ կապված իրավահարաբերությունների վրա:

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **տնային կենդանիներ՝** «Անասնաբուժության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից սահմանած ցանկում ներառված կենդանիներ.

2) **թափառող կենդանիներ՝** կենդանական աշխարհի ոչ վայրի տեսակների առանձնյակներ, որոնք չունեն պահող կամ կորած համարվող տնային կենդանիներ.

3) **ցուցադրման, սպորտային կամ ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիներ՝** կենդանական աշխարհի վայրի և ոչ վայրի տեսակների առանձնյակներ, որոնք օգտագործվում են կրկեսներում, սպորտային և ժամանցային միջոցառումներում, մրցույթներում, ցուցահանդեսներում, լուսանկարվելու և նկարահանումների համար.

4) **ծառայողական նշանակության կենդանիներ՝** կենդանական աշխարհի ոչ վայրի տեսակների առանձնյակներ, որոնք օգտագործվում են պետական կառավարման համակարգի մարմինների կանոնադրական խնդիրների շրջանակներում պահակության կամ որոնողափրկարարական նպատակների համար.

5) **կենդանի պահող՝** տնային, ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային կամ ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանուն տիրապետող, տնօրինող կամ օգտագործող 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ.

6) **Կենդանիների կացարան՝** վայր, որտեղ կերակրվում, բուժվում կամ պահվում են թափառող, կորած կամ լքված կենդանիները, ինչպես նաև սեփականատիրոջ համաձայնությամբ՝ ժամանակավոր պահման և կերակրման հանձնված կենդանիները.

7) կենդանիների բուծարան՝ կենդանիների բուծման համար հատուկ հարմարեցված և համապատասխան սարքավորումներով կահավորված կառույց՝ նախատեսված կենդանիների բազմացման համար.

8) կենդանու անձնագիր՝ փաստաթուղթ, որը պարունակում է տեղեկատվություն կենդանու նույնականացման վերաբերյալ և կենդանի պահողի մասին՝ տրամադրվում է անասնաբույժի կողմից: Կենդանու նույնականացման համար օգտագործվում է տեղեկատվություն պարունակող պիտակ կամ մարմնի որոշակի հատվածում ամրացված միկրոսխեմա կամ դաջվածք.

Հոդված 2. Կենդանիների բարեկեցությունը եւ կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքը կարգավորող օրենսդրությունը

1. Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում հասարակական հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերով:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Օրենքի նպատակը

Սույն օրենքի նպատակն է կարգավորել տնային և թափառող, ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային կամ ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի, այդ թվում՝ պահման, խնամքի, բուծման, հաշվառման, առուվաճառքի հետ կապված իրավահարաբերությունները:

ԳԼՈՒԽ 2

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 4. Կառավարության իրավասությունը

1. Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

1) ապահովում է Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող, ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային կամ ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի պետական քաղաքականության իրականացումը.

2) հաստատում է Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող կենդանիների պաշտպանության և վերարտադրության բնագավառների պետական ծրագրերը.

3) սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային կամ ժամանցային միջոցառումների համար կենդանիների օգտագործման կարգը և հաստատում այս ոլորտում պետական ծրագրերը.

4) հաստատում է կացարանների կառուցման չափորոշիչները, կառավարման և շահագործման կարգը, կացարաններում իրականացվող պարտադիր միջոցառումների ցանկը (ներառյալ կացարան տեղափոխված թափառող շների ստերջացումը, պատվաստումը և այլ անասնաբուժական միջոցառումներ).

5) իրականացնում է միջազգային համագործակցություն.

6) հաստատում է Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող, ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային կամ ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիների պահման, խնամքի, բուծման, բռնելու, հաշվառման և առուվաճառքի կարգը.

7) հաստատում է կենդանու անձնագիր ստանալու և միկրոսխեմաներ տեղադրելու, շների, կատուների պահողների նույնականացման համար անհրաժեշտ տվյալները կենտրոնացված առցանց բազայում ներառելու կարգը.

8) սահմանում է սույն օրենքի կարգավորման առարկա հանդիսացող կենդանիների ցանկը:

2. Տնային կենդանիների կառավարման ոլորտում խնդիրների բարձրաձայնման, հավաքագրման և հասցեագրման նպատակով ՀՀ վարչապետը ձևավորում է միջգերատեսչական հանձնաժողով, հաստատում դրա անհատական կազմը և աշխատակարգը: Հանձնաժողովի կազմում պարտադիր ներկայացվածություն պետք է ունենան ոլորտի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնց քանակը որոշում է տարածքային կառավարման և ենթակառուցվածքների բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը և ներկայացնում ՀՀ վարչապետի հաստատմանը:

Հոդված 5. Լիազոր մարմինները և դրանց լիազորությունները

1. Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում լիազոր մարմինների շրջանակը ներառում է տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, էկոնոմիկայի, ներքին գործերի ոլորտներում լիազորված պետական մարմինները՝ սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված լիազորությունների շրջանակում:

2. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը՝

1) մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող, ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային կամ ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի պետական քաղաքականությունը.

2) մշակում է կացարանների կառուցման չափորոշիչները, կառավարման և շահագործման կարգը, կացարաններում իրականացվող պարտադիր միջոցառումների ցանկը.

3) կազմակերպում է համայնքների տարածքում թափառող կենդանիների համար նախատեսված կենդանիների կացարանների և հարակից ենթակառուցվածքների (ախտորոշիչ լաբորատորիա, անասնաբուժական կենտրոն, վիրահատարան և այլն) նախագծում, կառուցում և կառավարում այդ թվում նաև արտապատվիրակման կամ պետություն-մասնավոր համագործակցության ձևաչափով.

4) իր իրավասության սահմաններում իրականացնում է միջազգային համագործակցություն:

3. Էկոնոմիկայի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը՝

1) մշակում է Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող կենդանիների պաշտպանության և վերարտադրության բնագավառների պետական ծրագրերը.

2) մշակում է Հայաստանի Հանրապետության տարածքում ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային կամ ժամանցային միջոցառումների համար կենդանիների օգտագործման կարգը և այս ոլորտում պետական ծրագրերը.

3) մշակում է Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող, ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային կամ ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիների պահման, խնամքի, բուծման, հաշվառման, առուվաճառքի և բռնման կարգը.

4) մշակում է կենդանու անձնագիր ստանալու և միկրոսխեմաներ տեղադրելու, շների, կատուների և այլ տնային կենդանիներ պահողների նույնականացման համար անհրաժեշտ տվյալները կենտրոնացված առցանց բազայում ներառելու կարգը:

4. Կենսագործունեությանը (կյանքին) սպառնացող վտանգավոր իրավիճակներում (արտակարգ իրավիճակներ) հայտնված կենդանիների փրկության հետ կապված գործառույթներն իրականացնում է ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը՝ համագործակցությամբ այլ իրավասու մարմինների:

Հոդված 6. Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները

1. Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով:

Հոդված 7. Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին օրենքի պահանջների կատարման հանրային վերահսկողությունը

1. Սույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ հանրային վերահսկողությունը կարող է իրականացվել հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև քաղաքացիների կողմից կամավոր սկզբունքով:

2. Սույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ հանրային վերահսկողության արդյունքները կարող են ներկայացվել համապատասխան լիազոր մարմնին և տեղական ինքնակառավարման մարմիններին, իսկ առերևույթ

հանցագործության հատկանիշներ հայտնաբերվելու դեպքում՝ ՀՀ դատախազություն կամ ՀՀ քննչական կոմիտե:

3. Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները և քաղաքացիները իրավասու են իրականացնել հետևյալ գործառույթները՝

1) Հանրային վայրերում արձանագրել կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունք պարունակող օրենքով արգելված գործողությունները և ներկայացնել համապատասխան պետական լիազոր մարմնին կամ իրավապահ մարմիններին.

2) մասնակցել բնակչության շրջանում կենդանիների հանդեպ մարդասիրական վերաբերմունքի քարոզչության միջոցառումներին.

3) բնակչության շրջանում նպաստել կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի օրենսդրական կարգավորումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

ԳԼՈՒԽ 3.
ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հոդված 8. Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի սկզբունքները

1. Կենդանու հետ հարաբերվելիս հիմք են ընդունվում կենդանու նկատմամբ բարեխիղճ, կենդանասիրական և էթիկական սկզբունքները, որոնք ուղղված են կենդանու բարեկեցության, առողջ կենսագործունեության և կենդանու նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի պահպանությանը:

2. Կենդանու նկատմամբ վերաբերմունքը և մարդու կողմից կենդանու նկատմամբ ցանկացած միջամտություն իրագործվում է՝ հիմք ընդունելով կենդանու ցավզգաց լինելը, ֆիզիկական և էմոցիոնալ ապրումներ ունենալու հանգամանքը:

3. Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի սկզբունքներ են՝

1) մարդու պատասխանատվությունը կենդանու կյանքի և բարեկեցության համար.

2) էթիկական, սոցիալ-տնտեսական և անվտանգային նորմերի հավասարակշռության պահպանությունը մարդու և կենդանու համերաշխ համակեցության նպատակով.

3) պետության հոգածությունը և պատասխանատու լինելը թափառող կենդանիների նկատմամբ:

Հոդված 9. Կենդանիների նկատմամբ արգելված գործողությունները

1. Արգելվում է կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը, այն է՝

1) ցանկացած գործողություն, որը հանգեցնում է կենդանու մահվան, բացառությամբ կենդանու կողմից մարդու կյանքին սպառնացող վտանգի պարագայում ինքնապաշտպանության դեպքերի.

2) կենդանու կյանքի ընդհատումը խեղդելու, կախելու, մասնատման, ուժեղ հարվածի, մտրակման, հրազենով կրակելու, դիտավորությամբ վրաերթի միջոցով.

3) կենդանու կյանքի ընդհատումը թունավորման կամ այնպիսի նյութի ներարկման միջոցով, որը հանգեցնում է դաժան և ցավոտ մահվան.

4) սույն օրենքի դրույթները խախտելով՝ քնեցումը.

5) կենդանի վիճակում կենդանու մաշկահանումը, մորթազերծումը, հերձումը կամ անդամահատումը.

6) կենդանի վիճակում կենդանուն կրակի վրա նետելը, բարձրությունից կամ ընթացքի մեջ գտնվող փոխադրամիջոցներից նետելը.

7) բոլոր տեսակի կենդանիների մարտերի կազմակերպումը և իրականացումը.

8) թափառող կենդանիների այնպիսի հավաքը կամ բռնումը, որը հանգեցնում է կենդանու խեղմանը կամ կենդանու կյանքի ընդհատմանը:

2. Արգելվում է նաև՝

1) վիրաբուժական միջամտության իրականացումն առանց ցավազրկման.

2) կենդանու նկատմամբ սեփականության իրավունքից կամ պահելուց հրաժարվելը մինչ կենդանուն նոր պահողի կամ համապատասխան կացարան հանձնելը.

3) կենդանուն կանխամտածված կամ անփութորեն լքելը.

4) կենդանուն թողնելը իր կենսագործունեության հետ անհամատեղելի միջավայրում.

5) կենդանիների բուծումը կացարաններում.

6) կենդանիներին միմյանց նկատմամբ սադրելը.

7) կենդանիների այնպիսի վարժեցում, որը կարող է տանջանք կամ ցավ պատճառել կամ ուժասպառ անել կենդանուն.

8) առանց կենդանիների անատոմիական և ֆիզիոլոգիական կարողությունները հաշվի առնելու՝ դրանց ենթարկել ֆիզիկական ճնշումների.

9) անհրաժեշտ որակավորում և մասնագիտություն չունեցող անձանց կողմից կենդանիների բուժումը կամ անասնաբուժական դեղամիջոցի կիրառումը.

10) ցավազրկող նյութերի կամ այնպիսի նյութերի կիրառումը, որոնք կարող են կենդանիների առողջությանը վնասել, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք բժշկական կամ անասնաբուժական հիմնավորում ունեն և (կամ) թույլատրված փորձարկման շրջանակներում կատարվելիք բուժում են հանդիսանում.

11) սպորտային առավել արդյունքների ստացման նպատակով կենդանիների նկատմամբ խթանիչ նյութերի կիրառումը.

12) բնական կամ արհեստական սերմնավորումը, որը կենդանիների առողջության համար վտանգավոր է.

13) կենդանիներին կերակրել այնպիսի կերատեսակներով, որոնք պարունակում են վնասակար նյութեր, կամ չեն օգտագործվում տվյալ կենդանու կերակրման համար՝ ելնելով դրանց տեսակից, տարիքից և առողջական վիճակից.

14) անհամատեղելի տեսակների միևնույն տարածքում կամ միևնույն տարածքում միևնույն տեսակների բնակեցումը, որոնց միջև կարող է առաջանալ ագրեսիվություն, հարձակում կամ պայքար.

15) տնային կենդանիներին բուծել կամ պահել մսի կամ մորթու արտադրության նպատակով:

ՆԱԽԱԳԻԾ

Հոդված 10. Տնային կենդանիների պահման պահանջները

1. Տնային կենդանի պահողը պարտավոր է կենդանու համար՝ կախված տեսակից, տարիքից և ցեղատեսակից, ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված պահման և խնամքի կարգերով նախատեսված պահանջների կատարումը, որոնք ներառում են առնվազն հետևյալ պարտադիր պայմանները՝

1) տեղակայման և տեղաշարժման համար անհրաժեշտ տարածք, ազատություն և պայմաններ,

2) կերի և ջրի բավարար քանակություն,

3) կերակրման և խմելու վայրերից օգտվելու ազատ հնարավորություն,

4) կերակրվելու և խմելու համար անհրաժեշտ համապատասխան պարագաներ, որոնք հարմարեցված են կասեցնելու համար դրանց աղտոտումը և նվազեցնելու կենդանիների միջև ագրեսիվ մրցակցությունը,

5) կենսագործունեության համապատասխան միկրոկլիմա,

6) կենդանիների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների պարտադիր կանխարգելում և բուժում, հիվանդության կամ վնասվածքի դեպքում դիմել անասնաբույժի օգնությանը,

7) ձեռնարկել միջոցառումներ՝ ուղղված մակաբուծային հիվանդությունների դեմ պայքարի համալիրում ներքին և արտաքին մակաբույծների նկատմամբ կենդանիների բուժկանխարգելիչ միջոցառումների և օրենսդրությամբ սահմանված կարգով պարտադիր պատվաստումների իրականացմանը,

8) կանխել հասարակական վայրերի և շինությունների ընդհանուր օգտագործման տարածքների (վերելակների) աղտոտումը կենդանիների կողմից և ապահովել դրանց մաքրումը,

9) ձեռնարկել հնարավոր նվազագույն միջոցները կենդանիների՝ բարձրություններից ընկնելը կանխելու համար,

10) ձեռնարկել շրջապատին անհանգստություն պատճառող կենդանու առաջացրած աղմուկը վերացնելու կամ նվազեցնելու միջոցներ,

11) ձեռնարկել մարդկանց կամ գույքը չվնասելու միջոցառումներ,

12) ձեռնարկել կենդանիների անցանկալի վերարտադրությունը կանխող նվազագույն միջոցառումներ,

13) չխոչընդոտել իրավասու պետական մարմիններին վերահսկողություն իրականացնելիս և անհրաժեշտության դեպքում ներկայացնել տիրապետման տակ գտնվող կենդանուն կամ ներկայացնել պահանջվող տեղեկատվությունը:

2. Տնային կենդանի պահելու համար կենդանի պահողը պարտավոր է ձեռք բերել համապատասխան թույլտվություն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

3. Տնային շուն պահողը պարտավոր է նաև՝

1) կենդանուն ձեռք բերելիս իրականացնել անհրաժեշտ միջոցառումները Կառավարության սահմանած կարգով կենդանու անձնագիր ստանալու և կենդանու վրա միկրոսխեմա տեղադրելու նպատակով: Տնային և թափառող շների նույնականացման գործընթացում առաջնային պետք է լինի կենդանու անհատական տվյալներ պարունակող միկրոսխեմայի միջոցով պետական լիազոր մարմնի կողմից կառավարվող տվյալների բազայում կենդանու վերաբերյալ տվյալների արագ և անխոչընդոտ նույնականացումը:

Միկրոսխեմայի միջոցով պետք է հնարավոր լինի նույնականացնել կենդանու պահողին: Կենդանու պահողի նույնականացման անհնարինության բացակայության պարագայում կենդանին տեղակայվում է կացարանում,

2) կենդանուն ձեռք բերելուց հետո՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում, շանը ներկայացնել անասնաբուժական զննման սույն մասի 1-ին կետով սահմանված պահանջների ապահովման նպատակով,

3) ցուցահանդեսներին, մրցույթներին մասնակցելու, վաճառքի նպատակով տեղափոխման ընթացքում ունենալ դրանց նույնականացման անձնագրերը,

5) ապահովել կենդանիների առողջության պահպանման համար պահանջվող պատվաստումները, մակաբույծների դեմ մշակումները և այլ անհրաժեշտ միջոցառումները,

6) մշտական կապերով (պարաններով) պահելու դեպքում ապահովել ապաստարան և ազատ տեղաշարժման տարածք,

7) փակ տարածություններում պահելու դեպքում ապահովել ամենօրյա զբոսանք,

8) քաղաքային տրանսպորտով շների տեղափոխումը կազմակերպել միայն դնչկալի և կարճ կապի առկայությամբ, բացառությամբ փոքր դեկորատիվ ցեղատեսակների և փոքր խառնածին շների,

9) ճանապարհը կամ երթևեկելի մասն անցնելիս, ինչպես նաև մայրուղիների մոտ՝ ճանապարհային պատահարների կանխման նպատակով կենդանուն պահել կարճ կապի վրա,

10) պոտենցիալ վտանգավոր շների զբոսանքը կազմակերպել դնչկալի և կարճ կապի առկայությամբ ցանկացած հանրային վայրում,

11) բացառել պոտենցիալ վտանգավոր շների գտնվելը մարզադաշտերում, մանկապարտեզներում, մանկական խաղահրապարակներում, առողջապահական հիմնարկների տարածքներում,

12) շան կծելու դեպքում առավելագույնը երկօրյա ժամկետում պետական մարմիններին տեղեկացնել շան կծելու փաստի մասին և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ պատկան մարմինների ուղղորդմամբ:

5. Շներ պահողները իրավունք ունեն դրանց ազատ արձակել միայն իրենց սեփականության, տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող հատուկ առանձնացված տարածքներում կամ մեկուսացված շինություններում:

6. Երեքից ավել շուն պահելու համար կենդանի պահողը պարտավոր է համաձայնություն ստանալ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից:

Հոդված 11. Թափառող կենդանիների բռնման գործընթացում պատասխանատու վերաբերմունքի պահանջները

1. Թափառող կենդանիների բռնումը կազմակերպվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

2. Թափառող կենդանիների բռնումը պետք է իրականացվի համապատասխան հմտություններ և փորձ ունեցող մասնագետների կողմից և համապատասխան փոխադրամիջոցներով կենդանիների բռնումը անվտանգ իրականացնելու համար:

3. Թափառող կենդանիների բռնումը իրականացվում է թափառող կենդանիների գլխաքանակի նվազեցման նպատակով՝ զանգվածային ստերջացման միջոցով, ինչպես նաև կանխելու համաճարակների, վարակիչ հիվանդությունների տարածումը և վտանգը մարդու առողջության համար: Ստերջացումից հետո կենդանին բաց է թողնվում, բացառությամբ կենդանու մոտ վարակիչ հիվանդության առկայության, որի դեպքում կենդանին պահվում է կացարանի կարանտինային տարածքում մինչև վերջնական բուժումը:

4. Թափառող կենդանիների բռնումը սպանելու նպատակով արգելվում է, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

5. Թափառող կենդանիների բռնումը պետք է իրականացվի այնպիսի մեթոդներով, որոնք չեն վտանգում կենդանու կյանքը և բնականոն կենսագործունեությունը:

6. Թափառող կենդանիների բռնումն իրականացնող անձինք նախևառաջ ստուգում են կենդանու մոտ միկրոսխեմայի առկայությունը կենդանուն նույնականացնելու նպատակով: Եթե կենդանին չունի պահող, կենդանուն տեղափոխում են կացարան բնակության և իրականացնում անհրաժեշտ անասնաբուժական միջամտությունները: Եթե կենդանին ունի պահող, տեղական ինքնակառավարման մարմինները իրավապահ մարմինների հետ համագործակցությամբ իրականացնում են անհրաժեշտ միջոցառումները կենդանի պահողին կենտրոնացված տվյալների բազայում նույնականացնելու և գտնված կենդանուն պահողին հանձնելու նպատակով: Կենդանու պահողի չգտնվելու կամ կենդանու պահողի կողմից կենդանուց հրաժարվելու պարագայում կենդանի պահողի նկատմամբ կիրառվում են օրենքով սահմանված պահանջները, իսկ կենդանին տեղափոխվում է կացարան:

Հոդված 12. Ցուցադրման, սպորտային կամ ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի պահանջները

1. Կենդանիների մասնակցությամբ միջոցառումների, ցուցադրությունների, մրցույթների կազմակերպումը թույլատրվում է միայն տեղական ինքնակառավարման մարմնի կողմից սահմանված թույլտվության առկայության դեպքում:

2. Կենդանաբանական այգիների, ակվարիումների, տեռարիումների, վիվարիումների, դելֆինիարիաների, էկզոտարիումների, կենդանիների մասնակցությամբ կրկեսների և նմանատիպ կառույցների գործունեության կարգը սահմանում է կառավարությունը:

3. Ցուցադրման, սպորտային կամ ժամանցային միջոցառումների կամ նկարահանման համար օգտագործվող կենդանու հանդեպ արգելվում է կիրառել վարժեցման այնպիսի մեթոդներ, որոնք վնասում են կենդանու առողջությունը:

4. Արգելվում է կենդանու մասնակցությունը այնպիսի միջոցառմանը, ցուցադրմանը, մրցույթին կամ նկարահանմանը, որի արդյունքում կենդանին կարող է ենթարկվել տանջանքների, ստանալ վնասվածքներ, մատնվել սովի կամ ծարավի, հայտնվել կյանքին վտանգ սպառնացող իրավիճակում:

5. Կենդանու օգտագործումը միջոցառումների, ցուցադրման, մրցույթների կամ նկարահանման համար պետք է կազմակերպվի ապահովելով մարդկանց և այլ կենդանիների անվտանգությունը:

Հոդված 13. Ծառայողական նշանակության կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի պահանջները

1. Ծառայողական նշանակության կենդանիների բուծումը, վարժեցումը և պատրաստությունը կազմակերպվում է և իրականցվում է համապատասխան որակավորում ունեցող մասնագետների կողմից:

2. Ծառայողական նշանակության կենդանիների վարժեցումից հետո (պատրաստման վերջում) իրականցվում են ծառայողական կենդանիների թեստեր (հանձնարարական ստուգում), որից հետո այդ կենդանիներին օգտագործելու իրավունքի համար տրվում է սերտիֆիկատ (վկայագիր) տարբեր ծառայության նպատակներով:

3. Պարեկության ժամանակ արգելվում է ծառայողական շների փոխանցումը կենդանու տիրապետման հետ կապ չունեցող անձանց կամ առանց հսկողության թողնելը:

Հոդված 14. Կենդանիների բուծումը

1. Բուծվող կենդանու նկատմամբ պատասխանատու վերաբերմունքը կարգավորվում է սույն օրենքով կենդանի պահողի համար սահմանված պահանջների պահպանմանը:

2. Արգելվում է կենդանու նկատմամբ այնպիսի բնական կամ արհեստական սերմնավորման իրականացումը, որի արդյունքում նոր սերնդի մոտ առաջանում են հիվանդություններ և անոմալ շեղումներ, այդ թվում՝

1) հենաշարժողական հիվանդություններ,
2) խլություն,
3) կուրություն,
4) ատամների և գլխի դեֆորմացիա,
5) ագրեսիվություն:

3. Տնային կենդանիների բուծումը ձեռնարկատիրական նպատակով պետք է կազմակերպվի բուծարանում:

Հոդված 15. Կենդանիների վաճառքը ձեռնարկատիրական նպատակով

1. Կենդանիների վաճառք իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են ապահովել յուրաքանչյուր վաճառքի ենթակա կենդանու համար կերի և ջրի բավարար քանակություն, տեղաշարժման համար անհրաժեշտ տարածք և պայմաններ:

2. Կենդանիների վաճառքը կարելի է իրականացնել միայն մասնագիտացված խանութներում կամ հատկացված բացօթյա տարածքներում՝ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրված թույլտվության հիման վրա և կենդանիների նույնականացման անձնագրերի պարտադիր առկայությամբ:

Հոդված 16. Կենդանիների պահումը կացարաններում

1. Կենդանիների կացարաններում կարող են պահվել թափառող, գտնված կամ ժամանակավոր պահման հանձնված կենդանիներ: Կացարան տեղափոխված կենդանիները

անհրաժեշտ անասնաբուժական միջոցառումներից և ստերջացվելուց հետո կամ բաց են թողնվում համայնք, կամ մշտապես պահվում են կացարանում կենդանու խնամքի առանձնահատկությունների, կենդանու անվտանգության կամ համայնքի անվտանգության նկատառումներով պայմանավորված համայնքի ավագանու հայեցողությամբ, կամ ենթարկվում են քնեցման սույն օրենքով սահմանված հիմքերով:

2. Կենդանիների կացարանների պատասխանատուները պարտավոր են ապահովել պահվող կենդանիների կենսաբանական առանձնահատկություններին համապատասխան պայմաններ, բավարարել նրանց կերի, ջրի, քնի, շարժման և բնականոն վարքի բոլոր պահանջները:

3. Կենդանիների կացարանների պատասխանատուները պարտավոր են ապահովել անասնաբուժական ծառայության գործունեության կազմակերպումը՝ կացարանը սպասարկող անասնաբույժի միջոցով, ապահովելով կացարանում պահվող կենդանիների հիվանդությունների ախտորոշման, բուժման և կանխարգելիչ այլ միջոցառումների իրականացման նպատակով:

4. Կենդանիների կացարանների պատասխանատուները պարտավոր են վարել կացարանում պահվող կենդանիների հաշվառում բոլոր այն տվյալների գրանցմամբ, որոնք թույլ կտան նույնականացնել կենդանուն:

5. Կենդանիների կացարանների պատասխանատուները պարտավոր են ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ կորած և կացարան բերված կենդանու պահողին գտնելու համար:

6. Կենդանիների կացարանների պատասխանատուները կենդանուն կարող են հանձնել տիրապետման միայն 18 տարին լրացած գործունակ անձանց օրենքով սահմանված պահանջներին համապատասխան:

7. Կենդանիների կացարանը պետք է ունենա ինտերնետային հարթակ,որտեղ կտեղադրեն գտնված և կացարանում պահվող կենդանիների նկարները և այլ տեղեկատվություն:

8. Կենդանիների կացարանը պետք է իրականացնի կացարանից կենդանիների պահման խթանմանն ուղղված միջոցառումներ՝ ներառյալ հանրային իրազեկման և սոցիալական գովազդների միջոցով:

9. Կացարաններում կենդանիների պահման կարգը սահմանում է պետական լիազոր մարմինը:

ԳԼՈՒԽ 4

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ ԸՆԴՀԱՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՔՆԵՑՈՒՄԸ, ԱՆԿԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԴԻԱԿՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ, ԹԱՂՈՒՄԸ ԵՎ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ

Հոդված 17. Կյանքն ընդհատելու նպատակով կենդանիների քնեցումը

1. 1. Կենդանիների կյանքն ընդհատելու նպատակով կենդանիների քնեցման պահանջների վերաբերյալ իրավահարաբերությունները կանոնակարգվում են «Անասնաբուժության մասին» օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով սահմանված կարգով:

ՆԱԽԱԳԻԾ

Հոդված 18. Անկած կենդանիների դիակների հավաքումը, թաղումը և ոչնչացումը

1. Անկած կենդանիների դիակների թաղման վայրերը որոշվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ անասնաբուժական, շրջակա միջավայրի պահպանության, ճարտարապետական, քաղաքաշինության և շինարարական գործունեության օրենսդրության համաձայն:

2. Անկած կենդանիների դիակների հավաքման, թաղման և ոչնչացման կարգը սահմանում է տարածքային կառավարման և ենթակառուցվածքների բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը:

3. Արգելվում է կենդանիների թաղումը կամ դիակիզումը չնախատեսված վայրերում:

ԳԼՈՒԽ 5
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Հոդված 19. Պատասխանատվությունը սույն օրենքի պահանջները խախտելու դեպքում

1. Սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով արգելված գործողությունների կատարումն առաջացնում է քրեական պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

2. Սույն օրենքի այլ դրույթների խախտումներն առաջացնում են վարչական պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 20. Եզրափակիչ դրույթ

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հոդված 21. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքով սահմանված ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 113-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 113. «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջները խախտելը

1. առանց ցավազրկման վիրաբուժական միջամտություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. կենդանու նկատմամբ սեփականության իրավունքից կամ պահելուց հրաժարվելը մինչ կենդանուն նոր պահողի կամ համապատասխան կացարան հանձնելը կամ կենդանուն կանխամտածված կամ անփութորեն լքելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկի չափով:

3. կենդանուն թողնելը իր կենսագործունեության հետ անհամատեղելի միջավայրում՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

4. կենդանիներին կացարաններում բուծելը կամ կենդանու բնական կամ արհեստական սերմնավորումը, որը դրանց առողջության համար վտանգավոր է՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից հարյուրապատիկի չափով

5. կենդանիներին միմյանց նկատմամբ սադրելը կամ անհամատեղելի տեսակների կենդանիներին միևնույն տարածքում կամ միևնույն տարածքում միևնույն

տեսակների կենդանիների բնակեցումը, որոնց միջև կարող է առաջանալ ագրեսիվություն, հարձակում կամ պայքար՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

6. կենդանիների վարժեցումը, որը կարող է տանջանք կամ ցավ պատճառել կամ ուժասպառ անել կենդանուն կամ առանց կենդանիների անատոմիական և ֆիզիոլոգիական կարողությունները հաշվի առնելու՝ դրանց ֆիզիկական ճնշումների ենթարկելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

7. անհրաժեշտ որակավորում և մասնագիտություն չունեցող անձանց կողմից կենդանիների բուժումը կամ անասնաբուժական դեղամիջոցի կիրառումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

8. ցավազրկող նյութերի կամ այնպիսի նյութերի կիրառումը, որոնք կարող են կենդանու առողջությունը վնասել, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք բժշկական կամ անասնաբուժական հիմնավորում ունեն և (կամ) թույլատրված փորձարկման շրջանակներում կատարվելիք բուժում են հանդիսանում՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

9. սպորտային առավել արդյունքների ստացման նպատակով կենդանիների նկատմամբ խթանիչ նյութեր կիրառելը կամ կենդանիներին այնպիսի կերատեսակներով կերակրելը, որոնք պարունակում են վնասակար նյութեր, կամ չեն օգտագործվում տվյալ կենդանու կերակրման համար՝ ելնելով դրանց տեսակից, տարիքից և առողջական վիճակից՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

10. տնային կենդանիներին մսի կամ մորթու արտադրության նպատակով բուծելը կամ պահելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

11. առանց թույլտվության տնային կենդանի պահելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

12. առանց համաձայնության երեքից ավել շուն պահելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

13. Տնային կենդանի պահողի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահման և խնամքի կարգերը խախտելը՝

Կենդանի առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

14. Տնային կենդանի պահողի կողմից մակաբուծային հիվանդությունների դեմ պայքարի կամ օրենսդրությամբ սահմանված կարգով պարտադիր պատվաստումների իրականացմանն ուղղված միջոցառումներ չձեռնարկելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի չափով:

15. կենդանիների կողմից հասարակական վայրերի և շինությունների ընդհանուր օգտագործման տարածքների (վերելակների) աղտոտումը չկանխելը կամ աղտոտումից հետո այդ տարածքները չմաքրելը կամ շրջապատին անհանգստություն պատճառող կենդանու առաջացրած աղմուկը վերացնելուն կամ նվազեցնելուն ուղղված միջոցներ չձեռնարկելը

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

16. կենդանիների կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքին կամ ֆիզիկական անձանց առողջությանը վնաս պատճառելը կանխելու համար միջոցներ չձեռնարկելը

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հարյուրհիսունապատիկի չափով:

17. կենդանիների անցանկալի վերարտադրությունը կանխող նվազագույն միջոցառումներ չձեռնարկելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

18. տնային շներ պահելու սահմանված կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

19. Կենդանուն բռնելիս կենդանու առողջությանը էական վնաս պատճառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեսնապատիկի չափով:

20. Ցուցադրման, սպորտային կամ ժամանցային միջոցառումների կամ նկարահանման համար օգտագործվող կենդանու հանդեպ կենդանու առողջությունը վնասող վարժեցման մեթոդներ կիրառելը կամ կենդանուն այնպիսի միջոցառմանը, ցուցադրմանը, մրցույթին կամ նկարահանմանը ներգրավելը, որի արդյունքում կենդանին կարող է ենթարկվել տանջանքների, ստանալ վնասվածքներ, մատնվել սովի կամ ծարավի, հայտնվել կյանքին վտանգ սպառնացող իրավիճակում:

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

21. Պարեկության ժամանակ ծառայողական շներին կենդանու տիրապետման հետ կապ չունեցող անձանց փոխանցելը կամ առանց հսկողության թողնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով:

22. Կենդանիների բուժման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

23. Կենդանիների վաճառքի կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

24. Կացարաններում կենդանիների պահման կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից հարյուրապատիկի չափով:

25. Անկած կենդանիների դիակների հավաքման, թաղման և ոչնչացման կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից հարյուրապատիկի չափով:

26. Սույն հոդվածի 1-25-րդ մասերով սահմանված իրավախախտումները վարչական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափերի կրկնապատիկի չափով:

27. Սույն հոդվածով սահմանված իրավախախտումների հայտնաբերման համար որպես ապացույց կարող են կիրառվել նաև տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքավորումների միջոցով արձանագրված փաստերը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 219[1]-րդ հոդվածի 2-րդ մասում «113-րդ,» բառերը փոխարինել «113-րդ հոդվածի 2-6-րդ, 9-13-րդ, 15-19-րդ, 20-րդ (բացառությամբ վայրի կենդանիների մասով), 21-23-րդ մասերով (տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հայտնաբերվելու դեպքում՝ տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը),» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասը «111-րդ,» բառերից հետո լրացնել «113-րդ հոդվածի 2-6-րդ, 9-13-րդ, 15-19-րդ, 20-րդ (բացառությամբ վայրի կենդանիների մասով), 21-23-րդ մասերով (Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հայտնաբերվելու դեպքում՝ տեղեկացնելով համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնին),» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասը «112.11-րդ հոդվածներով,» բառերից հետո լրացնել «113-րդ հոդվածի 1-ին, 7-րդ, 8-րդ և 14-րդ մասերով,» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 242-րդ հոդվածում «94[1]-րդ,» բառերից հետո լրացնել «113-րդ հոդվածի 20-րդ մասով (վայրի կենդանիների մասով),» բառերով:

Հոդված 6. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 13-րդ, 22-25-րդ մասերի, որոնք ուժի մեջ են մտնում 2026 թվականի հուլիսի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 307-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝
«1. Կենդանու նկատմամբ դաժան վերաբերմունքը՝ ցանկացած գործողություն, որը հանգեցնում է կենդանու մահվան, բացառությամբ կենդանու կողմից մարդու կյանքին սպառնացող վտանգի պարագայում ինքնապաշտպանության դեպքերի, կենդանու կյանքի ընդհատումը խեղդելու, կախելու, մասնատման, ուժեղ հարվածի, մտրակման, հրազենով կրակելու, դիտավորությամբ վրաերթի միջոցով, կենդանու կյանքի ընդհատումը թունավորման կամ այնպիսի նյութի ներարկման միջոցով, որը հանգեցնում է դաժան և ցավոտ մահվան, «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի դրույթները խախտելով՝ կենդանու քնեցումը, կենդանի վիճակում կենդանու մաշկահանումը, մորթազերծումը, հերձումը կամ անդամահատումը, կենդանի վիճակում կենդանուն կրակի վրա նետելը, բարձրությունից կամ ընթացքի մեջ գտնվող փոխադրամիջոցներից նետելը, բոլոր տեսակի կենդանիների մարտերի կազմակերպումը և իրականացումը, թափառող կենդանիների այնպիսի բռնումը, որը հանգեցնում է կենդանու խեղմանը կամ կենդանու կյանքի ընդհատմանը, կենդանու նկատմամբ դաժան վերաբերմունքը՝ առանց մահվան ելքի, կենդանուն սահմանված կարգի խախտմամբ գիտահետազոտական, բժշկական կամ փորձարարական նպատակով օգտագործելը.

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:»:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Անասնաբուժության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-137-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «իրավաբանական անձանց» բառերից հետո լրացնել «լիցենզավորման ենթակա» բառերով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել 8.1 կետով.
«8.1) անասնաբուժական գործունեության լիցենզավորման կարգը.»

Հոդված 3. Օրենքի 34-րդ հոդվածը, 35-րդ հոդվածի 1-ին մասը, 35-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին,2-րդ,3-րդ,4-րդ,5-րդ,6-րդ,7-րդ,8-րդ,10-րդ,11-րդ,14-րդ,17-րդ,18-րդ, 19-րդ կետերը, 35-րդ հոդվածի 2-րդ մասի 16-րդ կետի «բ» ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի 16-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«ա. գառների, ուլերի, խոզերի, հորթերի պոչերի անդամատումը,»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 45-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 17-րդ և 18-րդ կետերով.
«17) տալիս է համայնքի տարածքում կենդանիների վաճառքի թույլտվություն.
18) տալիս է կենդանիների մասնակցությամբ միջոցառումների, ցուցադրությունների, մրցույթների կազմակերպման թույլտվություն:»:

Հոդված 2. Օրենքի 49-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 3. Օրենքի 50-րդ հոդվածի առաջին մասը լրացնել նոր 7-րդ կետով.
«7) սահմանում է համայնքի տարածքում անկած կենդանիների դիակների հավաքման, ոչնչացման և թաղման վայրերը:»:

Հոդված 4. Օրենքը լրացնել նոր 50.1 հոդվածով.

«Հոդված 50.1 Համայնքի ղեկավարի լիազորությունները կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում

1. Համայնքի ղեկավարը կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում
իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.
1) կազմակերպում է համայնքի տարածքում թափառող կենդանիների բռնման, կենդանիների կացարաններ տեղափոխման աշխատանքները.
2) սահմանված կանոններին համապատասխան՝ տալիս է համայնքի տարածքում տնային կենդանիներ պահելու թույլտվություն և կատարում է դրանց ամենամյա հաշվառում.
3) իրականացնում է համայնքի տարածքում պահվող կենդանիների նույնականացման անձնագրերի տրամադրումը և աջակցում է անասնաբուժական գրանցամատյանների աշխատանքների վարմանը.
4) սահմանված կարգով տրամադրում է կենդանիների բուծարանների և կացարանների գործունեության թույլտվություններ.
5) երեքից ավել շուն պահելու համար տալիս է համաձայնություն:

2. Համայնքի ղեկավարը «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1. օրենքով սահմանված կարգով իրականացնում է անխոչընդոտ վերահսկողություն և ստուգումներ կենդանիների պահման բոլոր վայրերում.

2. կենդանի տիրապետողից պահանջում և ստանում է կենդանի պահելուն առնչվող ցանկացած տեղեկատվություն, բացատրություններ և փաստաթղթեր:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել նոր 58.1 հոդվածով՝

«Հոդված 58.1 Քաղաքապետի լիազորությունները կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում

1. Քաղաքապետը կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1) կազմակերպում է համայնքի տարածքում թափառող կենդանիների բռնման և կացարաններ տեղափոխման աշխատանքները.
2) համաքաղաքային կանոններին համապատասխան՝ տալիս է քաղաքի տարածքում տնային կենդանիներ պահելու թույլտվություն և կատարում է դրանց ամենամյա հաշվառում.
3) իրականացնում է Երևանի տարածքում պահվող կենդանիների նույնականացման անձնագրերի տրամադրումը և աջակցում է անասնաբուժական միջոցառումների գրանցամատյանների աշխատանքների վարմանը.
4) սահմանված կարգով տրամադրում է կենդանիների բուժարանների և կացարանների գործունեության թույլտվություններ.
5) սահմանում է Երևանի տարածքում անկած կենդանիների դիակների հավաքման, ոչնչացման և թաղման վայրերը.
6) երեքից ավել շուն պահելու համար տալիս է համաձայնություն:

2. Քաղաքապետը «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1) օրենքով սահմանված կարգով իրականացնում է անխոչընդոտ վերահսկողություն և ստուգումներ կենդանիների պահման բոլոր վայրերում.
2) կենդանի տիրապետողից պահանջում է կենդանի պահելուն առնչվող ցանկացած տեղեկատվություն, բացատրություններ, փաստաթղթեր:»:

Հոդված 2. Օրենքի 96-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 4-րդ և 5-րդ կետերով.

«4) վարչական շրջանի տարածքում, սահմանված կանոններին համապատասխան, տալիս է կենդանիների վաճառքի թույլտվություն.
5) վարչական շրջանի տարածքում տալիս է կենդանիների մասնակցությամբ միջոցառումների, ցուցադրությունների, մրցույթների կազմակերպման թույլտվություն:»:

Հոդված 3, Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական տուրքերի և վճարների մասին» 1997 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-185 (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 13-րդ կետում «քաղաքային բնակավայրերում» բառերը փոխարինել «համայնքի վարչական տարածքում» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 13.1-13.3-րդ կետերով.

«13.1) մասնագիտացված խանութներում կամ հատկացված բացօթյա տարածքներում կենդանիների վաճառքի թույլտվության համար.

13.2) կենդանիների մասնակցությամբ միջոցառումների, ցուցադրությունների, մրցույթների կազմակերպման թույլտվության համար.

13.3) կենդանիների բուծարանների և կացարանների գործունեության թույլտվությունների համար.»:

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 13-րդ կետում «քաղաքային բնակավայրերում» բառերը փոխարինել «համայնքի վարչական տարածքում» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 13.1-13.3-րդ կետերով.

«13.1) մասնագիտացված խանութներում կամ հատկացված բացօթյա տարածքներում կենդանիների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ.

13.2) կենդանիների մասնակցությամբ միջոցառումների, ցուցադրությունների, մրցույթների կազմակերպման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսան հազարից քառասուն հազար դրամ.

13.3) կենդանիների բուծարանների և կացարանների գործունեության թույլտվությունների համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1998 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 145-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Կենդանիների նկատմամբ կիրառվում են գույքի մասին ընդհանուր կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ այլ իրավական ակտերով:

2. Իրավունքներն իրացնելիս կենդանիների նկատմամբ արգելվում է «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի սկզբունքներին հակասող վերաբերմունքը:»:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1 բաժնով.

	«7.1 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ							
1.	Անասնաբուժական գործունեություն	ԿՄ	-	-	-	Ո	-	Վ»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածը լրացնել 6.1 կետով.

«6.1 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

6.1.1 անասնաբուժական գործունեության համար	բազային տուրքի 100-ապատիկի չափով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը. առաջարկվող կարգավորման բնույթը և ակնկալվող արդյունքը

Հայաստանի Հանրապետությունում ոչ վայրի կենդանիների հետ կապված իրավահարաբերությունները՝ բացառությամբ գյուղատնտեսական նշանակության, հստակ կարգավորումներ չունեն: Բաց է տնային, թափառող, ծառայողական նշանակության, ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիների հետ կապված համալիր և ամբողջական կարգավորումների դաշտը: Վերոնշյալ ցանկից հատկապես հրատապ է թափառող կենդանիների հետ կապված կարգավորումների անհրաժեշտությունը՝ պայմանավորված անվտանգային և առողջապահական լուրջ խնդիրներով:

Այս խնդիրներին լուծում տալու նպատակով բազմաթիվ բազմաշահառու քննարկումների արդյունքում միջազգային փորձի խորքային ուսումնասիրությամբ մշակվել է «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» մայր օրենքի (այսուհետ՝ Օրենք) և հարակից օրենքների նախագծերի փաթեթը, որով առաջարկվում են առկա խնդիրների իրավական լուծումները:

«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի նախագծով սահմանվում են կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում անձանց պարտականությունները և սահմանափակումները, կենդանիների նկատմամբ վերաբերմունքի պահանջներն ու արգելված գործողությունները, տնային կենդանիների պահման և խնամքի պահանջները, թափառող կենդանիների, ցուցադրման, սպորտային և ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիների, ծառայողական նշանակության համար օգտագործվող կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի պահանջները, ինչպես նաև կարգավորվում կենդանիների բուծման, վաճառքի և օգտագործման ոլորտում ծագող իրավահարաբերությունները: Օրենքի նախագծի կարգավորումներից բացի՝ նախագծի ընդունումից հետո ՀՀ կառավարության և լիազոր մարմինների կողմից կընդունվեն նախագծից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերը, որոնցով կամբողջացվի կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի իրավական դաշտը:

Օրենքի նախագծում հստակեցված են լիազոր մարմիններից յուրաքանչյուրի իրավասության շրջանակները, որը կնպաստի կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորմանը և կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի կանխարգելմանը:

Նախագծերի փաթեթով նախատեսվում է համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում և ՀՀ քրեական օրենսգրքում՝ սահմանելով վարչական պատասխանատվություն «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքով սահմանված պահանջների խախտման համար, իսկ կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունք պարունակող արգելված գործողությունների համար ընդլայնել արդեն իսկ սահմանված քրեական պատասխանատվության տիրույթը: Առաջարկվող փոփոխությունները պայմանավորված են և բխում են այն իրողությունից, որ չնայած իրավական ակտերով սահմանված որոշակի սանկցիաներին՝ գործնականում դատական պրակտիկա չի ձևավորվել, ինչը վկայում է կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի կանխարգելման ոլորտում անհրաժեշտ գործիքակազմի պակասի կամ թերությունների մասին:

Նախագծերի փաթեթով առաջարկվում է լրացումներ և փոփոփություններ կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքներում, որոնցում հստակ սահմանվում են տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում: Նախագծերի ընդունման արդյունքում տեղական ինքնակառավարման մարմինները կստանձնեն լիազորություններ սույն օրենքով սահմանված պահանջների վերահսկողության ոլորտում, նաև կենդանիների հաշվառման, վաճառքի, թույլտվությունների տրամադրման, ինչպես նաև համայնքի տարածքում թափառող կենդանիների խնդրի պատշաճ լուծման ուղղությամբ:

Նախագծերի փաթեթով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորություններով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել նաև լրացումներ կատարել «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում, որոնցով սահմանվել են համապատասխան թույլտվությունների տրամադրման համար գանձվող տտեղական տուրքերը և դրանց դրույքաչափերը: Դրանք սահմանելիս հաշվի են առնվել նաև այդ ոլորտում առկա միջազգային փորձը:

Ներկայումս ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կենդանիների նկատմամբ կիրառվում են գույքի մասին ընդհանուր կանոնները՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտներ: Գույքային իրավունքներն իրացնելիս հաշվի չի առնվում կենդանիների՝ որպես զգայական և կենսաբանական պահանջներ ունեցող, ցավազգաց էակներ լինելու հանգամանքը և սույն իրավունքների իրացման շրջանակում կենդանիները պաշտպանված չեն դաժան և անպատասխանատու վերաբերմունք պարունակող գործողություններից: Սույն նախագծերի կարգավորումներով կենդանիների նկատմամբ գույքային իրավունքներն իրացնելիս կարգելվի «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքով սահմանված պահանջների խախտումը:

Նախագծերի փաթեթով նաև առաջարկվում է՝ «Անասնաբուժության մասին» օրենքի այն հոդվածները, որոնք սահմանում են կենդանիների բարեկեցության սկզբունքները, տնային կենդանիների նկատմամբ վերաբերմունքի պահանջները, կենդանիներ տիրապետողների պարտականություններն ու իրավասությունները, փորձարկումների համար օգտագործվող կենդանիների շուրջ իրավահարաբերությունները ճանաչել ուժը կորցրած և սահմանել «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքում՝ կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի շուրջ ավելի համապարփակ և համալիր կարգավորումներ ունենալու նպատակով: Բացի այդ առաջարկվում է անասնաբուժական գործունեությունը սահմանել որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ, ինչը կնպաստի անասնաբուժության ոլորտում ծառայությունների

մատուցման որակի բարձրացմանը: Առաջարկվող կարգավորումը բխում է նաև միջազգային փորձի ուսումնասիրությունից:

Օրենքի և նախագծերի մշակման փուլում ուսումնասիրվել է մի շարք երկրների փորձը ոլորտում, մասնավորապես Ավստրիայի, Շվեդիայի, Ֆինլանդիայի, Ռուսաստանի, Լատվիայի, Էստոնիայի և մի շարք այլ երկրներում կենդանիների բարեկեցության հիմնական սկզբունքները, կենդանիների բնականոն վարքի պահանջմունքները կարգավորող իրավական նորմերը, վերահսկողության և պատասխանատվության մեխանիզմները:

Թափառող կենդանիների, մասնավորապես՝ շների հետ կապված հիմնախնդրի լուծումը հեղինակների կողմից ուսումնասիրված և այդ ոլորտում հաջողած երկրներում հնարավոր է դարձել բացառապես համալիր և բազմակողմանի օրենսդրական, ենթաօրենսդրական լուծումների և ինստիտուցիոնալ գործիքակազմերի առկայության և փուլային կիրարկման պարագայում, որոնց խիստ պարզեցված ցանկը հետևյալն է՝

- թափառող կենդանիների համատարած ստերջացում, պատվաստում վտանգավոր և տարածված հիվանդությունների դեմ,
- թափառող կենդանիների համար նախատեսված կացարանների կառուցում ժամանակավոր և որոշ դեպքերում կենդանիների մշտական բնակության համար
- կացարաններից կենդանիների որդեգրման խրախուսում,
- օրենքով սահմանված դեպքերում քնեցում
- խստացված պատժամիջոցների կիրառում սեփական տնային կենդանուն դիտավորությամբ կամ անզգուշությամբ լքող կենդանի պահողների նկատմամբ. այս մեխանիզմը գործելու է տնային կենդանիների վրա միկրոչիպերի պարտադիր տեղադրման և կենտրոնացված հաշվառման համակարգի միջոցով, որոնք նույնպես սահմանված են օրենքի նախագծում,
- կենդանիների նկատամամբ մարդասիրական և քաղաքակիրթ վերաբերմունքի խթանում:

Նախագծերի փաթեթի մշակման փուլերում մշտապես տեղի են ունեցել քննարկումներ ԱԺ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովում ձևավորված Կենդանիների պաշտպանության հարցերով աշխատանքային խմբի անդամների, ոլորտի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, փորձագետների, կենդանասերների, պետական մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ և վեր հանված խնդիրներն ու իրավական կարգավորումները դիտարկվել են նախագծերում:

«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի նախագծի և հարակից նախագծերի ընդունման արդյունքում կհստակեցվեն ոլորտում վերահսկողություն իրականացնող մարմինների լիազորությունները և բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունը: Օրենքով նախատեսվող տնային կենդանիների հաշվառման գործիքակազմի ներդրման արդյունքում կվերահսկվի տերերի կողմից տնային կենդանիների՝ հատկապես շների լքելու դեպքերը, որը իր հերթին կնպաստի թափառող անտուն շների գլխաքանակի նվազեցմանը:

Նախագծերի ընդունման և կիրակման արդյունքում ակնկալվում է նվազեցնել կենդանիների նկատմամբ դաժան և անպատասխանատու գործողությունները և ունենալ իրավական մեխանիզմներ, որոնք կապահովեն կենդանիների բարեկեցությունն ու պաշտպանվածությունը: Օրենքի նախագծում նաև հստակ սահմանվում են հանրային վերահսկողության իրականացման մեխանիզմները քաղաքացիների և հասարակական կազմակերպությունների կողմից, որոնք կարող են նպաստել

բնակչության շրջանում կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի օրենսդրական կարգավորումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը և կենդանիների հանդեպ մարդասիրական վերաբերմունքի քարոզչությանը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

~~Հոդված 113. Քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու կանոնները խախտելը~~

~~*(վերնագիրը խմբ. 19.12.12 ՀՕ-247-Ն)*~~

~~1. Քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու կանոնները խախտելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկից մինչև տասնապատիկի չափով.~~

~~2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները, որոնց հետևանքով վնաս է պատճառվել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գույքին, ինչպես նաև ֆիզիկական անձանց առողջությանը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև հիսնապատիկի չափով:~~

Հոդված 113. «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջները խախտելը

1. առանց ցավազրկման վիրաբուժական միջամտություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. կենդանու նկատմամբ սեփականության իրավունքից կամ պահելուց հրաժարվելը մինչ կենդանուն նոր պահողի կամ համապատասխան կացարան հանձնելը կամ կենդանուն կանխամտածված կամ անփութորեն լքելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկի չափով:

3. կենդանուն թողնելը իր կենսագործունեության հետ անհամատեղելի միջավայրում՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

4. կենդանիներին կացարաններում բուծելը կամ կենդանու բնական կամ արհեստական սերմնավորումը, որը դրանց առողջության համար վտանգավոր է՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից հարյուրապատիկի չափով

5. կենդանիներին միմյանց նկատմամբ սադրելը կամ անհամատեղելի տեսակների կենդանիներին միևնույն տարածքում կամ միևնույն տարածքում միևնույն տեսակների կենդանիների բնակեցումը, որոնց միջև կարող է առաջանալ ագրեսիվություն, հարձակում կամ պայքար՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

6. կենդանիների վարժեցումը, որը կարող է տանջանք կամ ցավ պատճառել կամ ուժասպառ անել կենդանուն կամ առանց կենդանիների անատոմիական և ֆիզիոլոգիական կարողությունները հաշվի առնելու՝ դրանց ֆիզիկական ճնշումների ենթարկելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

7. անհրաժեշտ որակավորում և մասնագիտություն չունեցող անձանց կողմից կենդանիների բուժումը կամ անասնաբուժական դեղամիջոցի կիրառումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

8. ցավազրկող նյութերի կամ այնպիսի նյութերի կիրառումը, որոնք կարող են կենդանու առողջությունը վնասել, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք բժշկական կամ անասնաբուժական հիմնավորում ունեն և (կամ) թույլատրված փորձարկման շրջանակներում կատարվելիք բուժում են հանդիսանում՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

9. սպորտային առավել արդյունքների ստացման նպատակով կենդանիների նկատմամբ խթանիչ նյութեր կիրառելը կամ կենդանիներին այնպիսի կերատեսակներով կերակրելը, որոնք պարունակում են վնասակար նյութեր, կամ չեն օգտագործվում տվյալ կենդանու կերակրման համար՝ ելնելով դրանց տեսակից, տարիքից և առողջական վիճակից՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

10. տնային կենդանիներին մսի կամ մորթու արտադրության նպատակով բուծելը կամ պահելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

11. առանց թույլտվության տնային կենդանի պահելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

12. առանց համաձայնության երեքից ավել շուն պահելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

13. Տնային կենդանի պահողի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահման և խնամքի կարգերը խախտելը՝

Կենդանի առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

14. Տնային կենդանի պահողի կողմից մակաբուծային հիվանդությունների դեմ պայքարի կամ օրենսդրությամբ սահմանված կարգով պարտադիր պատվաստումների իրականացմանն ուղղված միջոցառումներ չձեռնարկելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի չափով:

15. կենդանիների կողմից հասարակական վայրերի և շինությունների ընդհանուր օգտագործման տարածքների (վերելակների) աղտոտումը չկանխելը կամ աղտոտումից հետո այդ տարածքները չմաքրելը կամ շրջապատին անհանգստություն պատճառող

կենդանու առաջացրած աղմուկը վերացնելուն կամ նվազեցնելուն ուղղված միջոցներ չձեռնարկելը

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

16. կենդանիների կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքին կամ ֆիզիկական անձանց առողջությանը վնաս պատճառելը կանխելու համար միջոցներ չձեռնարկելը

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հարյուրհիսունապատիկի չափով:

17. կենդանիների անցանկալի վերարտադրությունը կանխող նվազագույն միջոցառումներ չձեռնարկելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

18. տնային շներ պահելու սահմանված կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

19. Կենդանուն բռնելիս կենդանու առողջությանը էական վնաս պատճառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեսնապատիկի չափով:

20. Ցուցադրման, սպորտային կամ ժամանցային միջոցառումների կամ նկարահանման համար օգտագործվող կենդանու հանդեպ կենդանու առողջությունը վնասող վարժեցման մեթոդներ կիրառելը կամ կենդանուն այնպիսի միջոցառմանը, ցուցադրմանը, մրցույթին կամ նկարահանմանը ներգրավելը, որի արդյունքում կենդանին կարող է ենթարկվել տանջանքների, ստանալ վնասվածքներ, մատնվել սովի կամ ծարավի, հայտնվել կյանքին վտանգ սպառնացող իրավիճակում:

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

21. Պարեկության ժամանակ ծառայողական շներին կենդանու տիրապետման հետ կապ չունեցող անձանց փոխանցելը կամ առանց հսկողության թողնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով:

22. Կենդանիների բուժման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

23. Կենդանիների վաճառքի կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

24. Կացարաններում կենդանիների պահման կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից հարյուրապատիկի չափով:

25. Անկյած կենդանիների դիակների հավաքման, թաղման և ոչնչացման կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից հարյուրապատիկի չափով:

26. Սույն հոդվածի 1-25-րդ մասերով սահմանված իրավախախտումները վարչական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափերի կրկնապատիկի չափով:

27. Սույն հոդվածով սահմանված իրավախախտումների հայտնաբերման համար որպես ապացույց կարող են կիրառվել նաև տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքավորումների միջոցով արձանագրված փաստերը:

Հոդված 219[1]. Տարածքային կառավարման մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները

Տարածքային կառավարման մարմինները քննում են սույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ իրենց տնօրինության տակ գտնվող հողերի մասով, ինչպես նաև սույն օրենսգրքի 43.1-ին հոդվածի 1-ին, 1.1-ին, 2-րդ, 8.2-րդ, 9-րդ, 10.5-րդ և 10.6-րդ մասերով, 152.1-ին հոդվածի 4-րդ մասով և 54.5-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Տեղական ինքնակառավարման մարմինները քննում են սույն օրենսգրքի 43.1-ին հոդվածի 2.1-8.1-ին (3-րդ, 4-րդ և 7-րդ մասերով նախատեսված իրավախախտումները տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հայտնաբերվելու դեպքում՝ տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը) և 10.1-10.4-րդ, 11-12-րդ մասերով, 48-րդ հոդվածով՝ իրենց տնօրինության տակ գտնվող հողերի մասով, ~~113-րդ,~~ 113-րդ հոդվածի 2-6-րդ, 9-13-րդ, 15-19-րդ, 20-րդ (բացառությամբ վայրի կենդանիների մասով),

21-23-րդ մասերով (տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հայտնաբերվելու դեպքում՝ տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը), 124.7-րդ հոդվածով, 152.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով, 152.2-րդ հոդվածի 1-ին մասով, 154.2-րդ հոդվածով, 156-րդ, 157-րդ հոդվածի 2-րդ մասով, 157.15-րդ, 158-րդ (բացառությամբ 2-րդ, 11-րդ, 16-րդ, 18-րդ, 22-րդ, 25-րդ, 27-րդ, 32-րդ, 37-45-րդ, 48-րդ և 49-րդ մասերի), 158.2-րդ, 162-րդ, 162.3-րդ, 169.14-րդ հոդվածի 1-ին մասի չորրորդ պարբերությամբ, 180-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով, 169.16-րդ (բացառությամբ 169.16-րդ հոդվածի 9-րդ, 10-րդ և 11-րդ մասերի), 180.2-րդ, 189.11-րդ , 189.12-րդ և 189.18-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության սահմաններում քննում են նաև սույն օրենսգրքի 114-րդ, 137.9-րդ, 154-րդ, 154.1-րդ, 156.1-րդ, 169.1-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Տարածքային կառավարման մարմինների անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունեն մարզպետները, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների անունից՝ համայնքի ղեկավարները, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետը կամ նրա որոշմամբ սահմանված պաշտոնատար անձինք:

Հոդված 224. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը

(վերնագիրը խմբ. 07.02.12 ՀՕ-2-Ն)

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը քննում է սույն օրենսգրքի 41.7-41.8-րդ, 43.1-ին հոդվածի 3-րդ, 4-րդ, 7-րդ (Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հայտնաբերվելու դեպքում՝ տեղեկացնելով համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնին), 10-12-րդ մասերով, 44.1-ին, 44.2-րդ, 47.14-րդ, 52.1-ին, 53-րդ, 53.2-53.6-րդ, 63.7-րդ, 88.1-ին, 95-րդ, 95. 7-րդ, 110.1-ին, 110.2-րդ, 111-րդ, 113-րդ հոդվածի 2-6-րդ, 9-13-րդ, 15-19-րդ, 20-րդ (բացառությամբ վայրի կենդանիների մասով), 21-23-րդ մասերով (Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հայտնաբերվելու դեպքում՝ տեղեկացնելով համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնին),123-123.4-րդ (բացառությամբ 123.4-րդ հոդվածի 1-ին մասի՝ տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետություն ներմուծելուց հետո օրենքով նախատեսված դեպքում դրա նկատմամբ այլ երկրում ծագած սեփականության իրավունքը սահմանված ժամկետում գրանցման չներկայացնելու դեպքի, ինչպես նաև 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.5-րդ (բացառությամբ ութերորդ, իններորդ, տասնչորսերորդ և տասնհինգերորդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.6-123.7-րդ, 124-124.4-րդ, 124.6-րդ, 124.8-րդ, 125-126-րդ, 128-

րդ, 129.2-րդ, 129.3-րդ, 131-րդ, 131.1-ին, 132-րդ, 134-րդ, 135.1-ին, 135.2-րդ, 139-րդ, 140-րդ, 153-րդ, 160-րդ (բացառությամբ 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված իրավախախտումների), 169.30-րդ հոդվածներով, 171.12-րդ հոդվածի 6-րդ, 9-12-րդ մասերով (Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հայտնաբերվելու դեպքում կազմված արձանագրությունը տրամադրվում է Շուկայի վերահսկողության տեսչական մարմնին), 172.2-րդ, 173-րդ, 173.2-րդ, 175-րդ, 177-րդ, 178-րդ, 178.1-ին, 178.2-րդ, 179.1-ին, 180-րդ (բացառությամբ հինգերորդ և վեցերորդ մասերով նախատեսված իրավախախտումների), 181-րդ, 182.3-րդ հոդվածներով, 182.4-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-8-րդ, 9-րդ (բացառությամբ պաշտպանության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի և սահմանապահ զորքերի զինծառայողների (աշխատակիցների) կողմից մեկուսացման կանոնների խախտման վերաբերյալ իրավախախտումների) և 10-րդ մասերով, 182.5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-10-րդ (բացառությամբ սույն օրենսգրքի 223.3-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների), 12-14-րդ մասերով, 183-րդ, 183.2-րդ, 184-րդ, 186-րդ (եթե իրավախախտումը կատարվել է ոստիկանության ենթակայության՝ ձերբակալվածներին պահելու վայրերում), 189.8-րդ, 190-193-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով և 204.2-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Ընդ որում, սույն օրենսգրքի 43.1-ին հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը քննում է 43.1-ին հոդվածի 3-րդ, 4-րդ և 7-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների մասով:

2. Հայաստանի Հանրապետության ոստիկանության անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով սահմանված պաշտոնատար անձինք:

Հոդված 238. Սննդամթերքի անվտանգության, բուսասանիտարիայի և անասնաբուժությանոլորտներում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը

(վերնագիրը խմբ. 25.10.23 ՀՕ-343-Ն)

1. Սննդամթերքի անվտանգության, բուսասանիտարիայի և անասնաբուժության ոլորտներում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը քննում է սույն օրենսգրքի 108-րդ, 109-րդ, 109.1-ին, 109.2-րդ, 109.3-րդ, 109.4-րդ և 110-րդ, 110.3-րդ, 110.4-րդ, 110.5-րդ, 110.6-րդ, 112-112.8-րդ, 112.9-րդ, 112.10-րդ և 112.11-րդ հոդվածներով,

113-րդ հոդվածի 1-ին, 7-րդ, 8-րդ և 14-րդ մասերով,158-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 13-րդ, 27-րդ, 32-րդ, 43-րդ, 44-րդ, 46-րդ, 48-րդ և 49-րդ մասերով (32-րդ մասով նախատեսված արարքներից որևէ մեկը կրկին կատարելու մասով), 169.32-րդ հոդվածի 1-ին մասով (ռազմավարական պաշարների պահուստում ներառվող սննդամթերքի և դրա արտադրության համար անհրաժեշտ հումքի մասով), 2-րդ մասի 1-ին կետով (ռազմավարական պաշարների պահուստում ներառվող սննդամթերքի և դրա արտադրության համար անհրաժեշտ հումքի մասով) և 3-րդ մասի 1-ին կետով (ռազմավարական պաշարների պահուստում ներառվող սննդամթերքի և դրա արտադրության համար անհրաժեշտ հումքի մասով), 182.4-րդ հոդվածի 3-րդ (սննդամթերքի վաճառքով զբաղվող առևտրի օբյեկտների, սննդամթերք արտադրող տնտեսավարող սուբյեկտների կամ հանրային սննդի օբյեկտների մասով) և 4-րդ մասերով, 182.5-րդ հոդվածի 3-րդ (բացառությամբ դեղորայքի) և 14-րդ մասերով, 188-րդ և 213.2-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

2. Սննդամթերքի անվտանգության, բուսասանիտարիայի և անասնաբուժության ոլորտներում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի անունից վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն մարմնի ղեկավարը, նրա տեղակալները, մարմնի համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարը, իսկ սույն օրենսգրքի 182.4-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ նաև ստուգայց իրականացնող պաշտոնատար անձինք:

Հոդված 242. Շրջակա միջավայրի օրենսդրության կատարման նկատմամբ պետական վերահսկողություն (հսկողություն) իրականացնող տեսչական մարմինը

(վերնագիրը փոփ. 21.03.18 ՀՕ-185-Ն, 04.03.20 ՀՕ-110-Ն)

Շրջակա միջավայրի օրենսդրության կատարման նկատմամբ պետական վերահսկողություն (հսկողություն) իրականացնող տեսչական մարմինը քննում են սույն օրենսգրքի 43.2-րդ հոդվածով, 49-րդ հոդվածով (բացառությամբ լեռնային աշխատանքների անվտանգ կատարման մասի), 50-52-րդ, 54^{2}-րդ հոդվածներով (հողերի պահպանության մասով), 54^{4}-րդ հոդվածով, 61-րդ հոդվածներով, 62-րդ հոդվածով (ջրային ռեսուրսների պահպանության մասով), 63^{2}-րդ հոդվածով, 63^{6}-րդ հոդվածով (բնական ջրային օբյեկտների մասով), 64-66-րդ, 68-79-րդ հոդվածներով, 80-րդ, 80.1-86-րդ հոդվածներով (մթնոլորտային օդի պահպանության համար սահմանված նորմերի ու կանոնների խախտման մասով), 87.1-91-րդ հոդվածներով, 93-րդ, 94-րդ, 94^{1}-րդ, 113-րդ հոդվածի 20-րդ մասով (վայրի կենդանիների մասով),157-րդ առաջին մասը, $169.^{4}$-րդ և $169.^{19}$ -րդ հոդվածներով, 201.1-201.5-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 307. Կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը

~~1. Կենդանու նկատմամբ դաժան վերաբերմունքը՝ կենդանու կյանքի ընդհատումը խեղդելու, կախելու, մասնատելու, թունավորելու կամ այնպիսի նյութ ներարկելու միջոցով, որը տառապանք պատճառելով է հանգեցնում մահվան, ողջ վիճակում կենդանու մաշկազերծումը, անդամահատումը, կենդանիների մարտի կազմակերպումը կամ իրականացումը կամ անտուն կենդանու այնպիսի հավաքը կամ բռնումը, որը հանգեցնում է կենդանու խեղմանը կամ կենդանու կյանքի ընդհատմանը, ինչպես նաև կենդանուն սահմանված կարգի խախտմամբ գիտահետազոտական, բժշկական կամ փորձարարական նպատակով օգտագործելը կամ այլ դաժան վերաբերմունքը~~

~~պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:~~

1. Կենդանու նկատմամբ դաժան վերաբերմունքը՝ ցանկացած գործողություն, որը հանգեցնում է կենդանու մահվան, բացառությամբ կենդանու կողմից մարդու կյանքին սպառնացող վտանգի պարագայում ինքնապաշտպանության դեպքերի, կենդանու կյանքի ընդհատումը խեղդելու, կախելու, մասնատման, ուժեղ հարվածի, մտրակման, հրազենով կրակելու, դիտավորության վրաերթի միջոցով, կենդանու կյանքի ընդհատումը թունավորման կամ այնպիսի նյութի ներարկման միջոցով, որը հանգեցնում է դաժան և ցավոտ մահվան, «Կենդանիների նկատմամբ պետասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի դրույթները խախտելով՝ կենդանու բնեցումը, կենդանի վիճակում կենդանու մաշկահանումը, մորթազերծումը, հերձումը կամ անդամահատումը, կենդանի վիճակում կենդանուն կրակի վրա նետելը, բարձրությունից կամ ընթացքի մեջ գտնվող փոխադրամիջոցներից նետելը, բոլոր տեսակի կենդանիների մարտերի կազմակերպումը և իրականացումը, թափառող կենդանիների այնպիսի բռնումը, որը հանգեցնում է կենդանու խեղմանը կամ կենդանու կյանքի ընդհատմանը, կենդանու նկատմամբ դաժան վերաբերմունքի դրսևորումը՝ առանց մահվան ելքի, կենդանուն սահմանված կարգի խախտմամբ գիտահետազոտական, բժշկական կամ փորձարարական նպատակով օգտագործելը,

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը բսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) առանձին դաժանությամբ,

3) 12 տարին չլրացած անձի ներկայությամբ կամ

4) շահադիտական դրդումներով՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 3. Հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) լիազոր մարմին՝ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը.

2) անասնաբուժություն՝ կենդանիների հիվանդությունների կանխում, ախտորոշում, բուժում, դրանց վերացման միջոցառումներ, կենդանիների և կենդանիների բարօրության պաշտպանություն, կենդանական ծագման մթերքի և հումքի արտադրության, վերամշակման, տեղափոխման, իրացման, անասնաբուժական դեղամիջոցների և անասնաբուժական միջոցների, կերերի, լրացակերերի արտադրության, դրանց ներմուծման և արտահանման, կենդանիների վարակիչ հիվանդությունների ներթափանցումից Հայաստանի Հանրապետության տարածքի պահպանության նկատմամբ հսկողության իրականացում.

3) անասնաբուժական գործունեություն՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց լիցենզավորման ենթակա մասնագիտական գործունեություն, որը նպատակաուղղված է կենդանիների, կենդանիների և մարդկանց համար ընդհանուր հիվանդությունների կանխարգելմանը, ախտորոշմանը, բուժմանը, կենդանիների առողջության և բարեկեցության պաշտպանությանը, անասնահամաճարակային իրավիճակների կանխմանը և վերացմանը, անվտանգ կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքի, կենդանական ծագման կողմնակի արտադրանքի ստացմանը.

4) անասնաբուժական ծառայություն՝ անասնաբուժության իրականացում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից.

5) համայնքն սպասարկող անասնաբույժ՝ մեկ կամ մի քանի համայնքում անասնաբուժական գործունեություն իրականացնող՝ համայնքն սպասարկող անասնաբույժ.

6) անասնաբուժական հսկման ենթակա ապրանքներ՝ կենդանիներ կամ դրանց բեղմնավորիչ նյութեր (ինկուբացիոն ձու, սերմնահեղուկ, ձվաբջիջ, զիգոտ, սաղմ), կենդանական ծագման մթերք, կենդանական ծագման հումք, կենդանական ծագման կողմնակի արտադրանք, կերեր, լրացակերեր, կերային խառնուրդներ, կերային հավելումներ, անասնաբուժական դեղամիջոցներ.

7) անասնաբուժական ուղեկցող փաստաթուղթ՝ անասնաբուժության ոլորտում օգտագործվող հաշվառված ձևաթղթեր (վկայական, տեղեկանք, սերտիֆիկատ), որոնք հավաստում են Հայաստանի Հանրապետություն ներմուծվող, արտահանվող և Հայաստանի Հանրապետության տարածքում փոխադրվող կենդանիների առողջական վիճակը, բեղմնավորիչ նյութերի, կենդանական ծագման մթերքի և հումքի, կենդանական ծագման կողմնակի արտադրանքի, կերատեսակների ծագումը, կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ ապահով տարածքներից և կենդանական ծագման մթերքի և հումքի, կերատեսակների, բեղմնավորիչ նյութերի, անասնաբուժական դեղամիջոցների անասնաբուժասանիտարական տեսակետից պիտանելիությունը.

8) անասնաբուժասանիտարական փորձաքննություն՝ կենդանական ծագման հումքի և մթերքի, կերատեսակների, կենդանիների բեղմնավորիչ նյութերի, անասնաբուժասանիտարական գնահատման նպատակով կատարվող հետազոտություն.

9) անասնաբուժական միջոցներ՝ անասնաբուժական գործունեության համար անհրաժեշտ հանդերձանք, սարքեր, գործիքներ, սարքավորումներ, կենդանիների խնամքի և պահման պարագաներ, անասնաբուժական հատուկ տրանսպորտ, տեխնիկա.

10) անասնաբուժական դեղամիջոց՝ անասնաբուժության ոլորտում օգտագործվող նյութ կամ նյութերի միացություն (կենսապատրաստուկներ՝ պատվաստանյութեր, հիվանդությունների հարուցիչների ախտորոշման և նույնականացման հավաքածուներ և պատրաստուկներ, իմուն և գերիմուն շիճուկներ, իմունոգլոբուլիններ, արյան ֆրակցիաներ, կենդանիների հյուսվածքներից և օրգաններից ստացված բուժիչ և կանխարգելիչ պատրաստուկներ, մանրէական աճեցվածքներ և մանրէական տարատեսակներ, հորմոնային պրեպարատներ, թիրեոստատիկներ, բետա-անտագոնիստներ, բուսական, հանքային, քիմիական, քիմիադեղագործական ծագման նյութեր, պատրաստուկներ կամ միջոցներ՝ բուժիչ, ախտահանիչ, հակամանրէային, միջատասպան, կրծողների դեմ պայքարի, հակաճիճվային, հակաարյունապարազիտային, հակատզային ազդեցությամբ).

11) թիրեոստատիկներ՝ վահանաձև գեղձի գործունեության վրա ազդող նյութեր, որոնք նպաստում են կենդանիների աճման արդյունավետությանը.

12) հորմոնային պրեպարատ՝ արտադրանքներ, որոնք պարունակում են հորմոնալ՝ էստրոգենային, անդրոգենային և հեստագենային ուղղակի և անուղղակի ազդեցությամբ նյութեր.

13) անասնաբուժական դեղամիջոցի դադարեցման ժամանակահատված՝անասնաբուժական դեղամիջոցի վերջին անգամ կիրառման և կենդանիներից կենդանական ծագման հումքի և մթերքի ստացման միջև ընկած ժամանակահատված, որի ընթացքում հավաստվում է, որ կենդանական ծագման հումքում և մթերքում անասնաբուժական դեղամիջոցի մնացորդային քանակներ չեն պարունակվում, կամ մնացորդային թույլատրելի քանակները չեն գերազանցվում.

14) անասնահամաճարակ՝ կենդանիների վարակիչ հիվանդությունների համեմատաբար կարճ ժամկետում արագ տարածվելու և զգալի տարածքներ զբաղվելու իրավիճակ, որը բնորոշվում է ընթացքի անընդհատությամբ ու դրսևորման պարբերականությամբ.

15) անասնապահական ֆերմա՝ վայր, որտեղ ժամանակավորապես կամ մշտապես պահվում են կենդանիներ, բացառությամբ անասնաբուժական կլինիկաների և կենդանիների շտապօգնության կազմակերպությունների.

16) կենդանիների բեղմնավորիչ նյութեր՝ սերմնահեղուկ, ձվաբջիջ, զիգոտ և սաղմ, բեղմնավորված ձկնկիթ, ինկուբացիոն ձու, որոնք օգտագործվում են կենդանիների արհեստական սերմնավորման, բեղմնավորման և բազմացման համար.

17) կենդանիներ՝ կաթնասուններ, թռչուններ, երկկենցաղներ, սողուններ, ձկներ, կակղամորթներ, խեցգետնակերպեր, խխունջներ, միջատներ, այլ ողնաշարավոր և անողնաշարավոր կենդանիներ, որոնք պահվում են մարդկանց կողմից կամ ազատ գոյատևում են.

18) գյուղատնտեսական կենդանիներ՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիներ (տավար, գոմեշ, ոչխար, այծ), խոզ, ձի, հավ, հնդկահավ, լոր, սագ, բադ, ճագար, ջայլամ, մեղու, շերամ և այլն, որոնք պահվում են կենդանական ծագման հումքի և մթերքի ստացման նպատակով.

19) տնային կենդանիներ՝ կենդանիներ, որոնք պատկանում են կերակրվող, բուծվող կամ պահվող, սակայն, որպես կանոն, սննդամթերքի ստացման համար չնախատեսված կենդանիների տեսակներին.

20) կենդանիների քնեցում՝ պետական գրանցում ստացած անասնաբուժական դեղամիջոցով կենդանիների ժամանակավոր ցավազրկում կամ կյանքի ընդհատում.

21) կենդանիների համարակալում՝ գյուղատնտեսական կենդանիների (բացառությամբ թռչունների, մեղուների) և տնային կենդանիների ականջներին կոդավորված տեղեկություն պարունակող հատուկ պիտակների կամ մարմնի որոշակի մասերին էլեկտրոնային չիպերի՝ կրիչների ամրացում, որը հնարավորություն է ընձեռում անհատականացնելու և հաշվառելու կենդանիներին.

22) մեկուսացում՝ զոոնոզներով վարակված կամ վարակման կասկածով կենդանիների՝ որոշակի ժամանակահատվածում և պայմաններում՝ առանձնացված տարածքում կամ ցանկապատումներում կամ շինություններում, մեկուսացնող միջոցառումներ.

23) կենդանիների կարանտին՝ Կառավարության կամ տարածքային կառավարման մարմինների կողմից կենդանիների կարանտինային հիվանդությունների բռնկումները վերացնող, վարակի օջախները մեկուսացնող և վարակի հետագա տարածումը կանխող, ինչպես նաև այդ ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների ժամանակավոր սահմանափակումներ ու լրացուցիչ պարտականություններ սահմանող ռեժիմային գործունեություն.

24) կանխարգելիչ կարանտին՝ վարակիչ հիվանդությունների ներթափանցումը կանխող միջոցառումներ, որոնք իրականացվում են ձեռք բերված կենդանիներին 30 օրվա ընթացքում առանձնացված պահելու և հիվանդությունների ախտորոշման համար հետազոտություններ ու կանխարգելիչ պատվաստումներ կատարելու նպատակով.

25) կենդանիների կարանտինային և հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդություններ՝ կենդանիների, կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդություններ, որոնք արագորեն տարածվում են, ընդգրկում ընդարձակ տարածքներ, պատճառում մեծ տնտեսական վնաս և վնասում կամ անմիջականորեն սպառնում են կենդանիների և հանրության առողջությանը.

26) կենդանիների պարտադիր ծանուցման ենթակա հիվանդություններ՝արագորեն տարածվելու, ընդարձակ տարածքներ ընդգրկելու և մեծ տնտեսական վնասներ հասցնելու հատկություններ ունեցող վարակիչ և ոչ վարակիչ հիվանդություններ, որոնց բացահայտման կամ կասկածի դեպքերը սահմանված կարգով ծանուցվում և գրանցվում են.

27) կենդանական ծագման մթերք՝ գյուղատնտեսական կենդանիների սպանդից գոյացած և չվերամշակված մսեղիքը, կիսամսեղիքը, քառորդ մսեղիքը, տեսակավորված ոսկրոտ և անոսկր միսը, աղացած և ծեծած միսը, պոչը և դմակը, վերջույթները՝ նախաբազկի և սրունքի հոդերից անջատված, ներքին օրգանները (լյարդ, փայծաղ, սիրտ, երիկամ, թոք, ըմպան, շնչափող, ստոծանի, թռչնի ստամոքս, որոճող կենդանիների կտրիչ), ենթամաշկային և ընդերային ճարպը, ուղեղը, արյունը, լեզուն, ամորձիները, գլուխը, կուրծը, ինչպես նաև չփաթեթավորված և չմակնշված մսամթերք, կաթ և կաթնամթերք, ձուկ և ձկնամթերք, երկկենցաղներ, սողուններ, խխունջներ, միջատներ, խեցգետնակերպեր, ցամաքային և ջրային այլ անողնաշարավորներ և դրանցից ստացված մթերք, չբեղմնավորված ձկնկիթ, սննդային ձու, բնական մեղր, որոնք առանց վերամշակման կամ վերամշակումից հետո օգտագործվում են սննդում կամ որպես պարենային հումք.

28) կենդանական ծագման հումք՝ կենդանիների սպանդից ստացված ներզատիչ գեղձեր, աղիք, կաշի, մորթի, մազ (բուրդ, խոզան, փետուր, աղվամազ), եղջյուր, սմբակ, ոսկոր, չվերամշակված ճարպ, լեղի, արյուն, մեղրամոմ, մոմաթերթ, մեղվի թույն, օձի թույն, կարիճի թույն, կենդանական ծագման այլ թույներ, տեխնիկական ալբումին, կազեին, ժելատին, որսորդական հաղթանշաններ և այլն, որոնք օգտագործվում են վերամշակումից հետո.

29) կենդանական ծագման կողմնակի արտադրանք՝ մարդկանց կողմից սպառման համար չնախատեսված կենդանական ծագման հումքի և մթերքի արտադրության, վերամշակման արդյունքում ստացված արտադրանք (մսոսկրային և մսային, եղջերային գոյացություններից ստացված, ձկնային ալյուր, արյան չորացված պլազմա և արյունից ստացված այլ արտադրանք, հիդրոլիզային սպիտակուցներ, ոսկորներից և կենդանական ծագման այլ արտադրանքներից ստացված ժելատին), կենդանիների դիակներ, որոնք հանդիսանում են տեխնիկական հումք, նախատեսված չեն մարդկանց կողմից սպառման համար և ենթակա են լրացուցիչ վերամշակման կամ ոչնչացման.

29.1) մսեղիք՝ սպանդի կամ մորթի ենթարկված կենդանու ամբողջական մարմինը առանց մաշկի, գլխի, վերջավորությունների ստորին հատվածների և ներքին օրգանների.

29.2) կիսամսեղիք՝ մսեղիքի ողնաշարի երկարությամբ հավասարաչափ հատվածների բաժանած մասերը.

29.3) քառորդ մսեղիք՝ մսեղիքի չորս մասի բաժանած հատվածները.

30) զոոնոզներ՝ կենդանիների վարակիչ հիվանդություններ, որոնց նկատմամբ զգայունակ են կենդանիները, ինչպես նաև կենդանիների վարակիչ որոշ հիվանդություններ, որոնց նկատմամբ զգայունակ են կենդանիները և մարդիկ.

30.1) անասնագերեզմանոց՝ սպանդի ոչ ենթակա կամ չախտորոշված հիվանդությամբ հիվանդ կամ համաճարակի հետևանքով անկած կամ հոգեվարքի վիճակում գտնվող կենդանիների կամ սպառման համար չնախատեսված կամ ոչնչացման ենթակա կենդանական ծագման կողմնակի արտադրանքի համար երկարատև թաղման համար նախատեսված, հատուկ գետնահորերով (խրամներով) կամ կենսաջերմային հորերով (Բեկարի հորերով) հագեցած ցանկապատված հողատարածք.

31) կենդանիների սպանդ՝ մարդու սպառման համար նախատեսված կենդանական ծագման հումքի և մթերքի ստացման նպատակով սպանդանոցներում կատարվող կենդանիների սպանդ, ներառյալ՝ որոշակի հիվանդությունների դեպքում թույլատրված սանիտարական սպանդը.

32) սանիտարական սպանդ՝ որոշակի հիվանդությունների դեմ պայքարում վարակված կամ վարակման անմիջական սպառնալիքի ենթակա կենդանիների հարկադիր պարտադիր սպանդ՝ պայմանական պիտանի կենդանական ծագման հումքի և մթերքի ստացմամբ.

33) կենդանիների մորթ՝ սույն օրենքով սահմանված նպատակներով և դեպքերում ոչ սպանդանոցային պայմաններում կատարվող կենդանիների մորթ.

34) կենդանիների և մարդկանց առողջությանը սպառնացող վտանգ՝կենդանական ծագման հումքի և մթերքի, կենդանական ծագման կողմնակի արտադրանքի, կերատեսակների, անասնաբուժական դեղամիջոցի և վարակի աղբյուր կամ փոխանցման գործոն հանդիսացող այլ օբյեկտները, առարկաները, որոնց օգտագործումը, սպառումը կամ առկայությունը կարող է կենդանիների և (կամ) մարդկանց առողջության համար վտանգ ներկայացնել.

35) վերացում՝ համաճարակային շղթայի բոլոր փուլերում կենդանիների, կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների տարածման

սահմանափակմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների արդյունք, երբ համաճարակային շղթան չի գործում.

36) ոչնչացում՝ կենդանիների և մարդկանց առողջությանը սպառնացող վտանգի հետագա որևէ օգտագործումը բացառելու նպատակով վնասազերծում՝ այրում կամ բարձր ջերմաստիճանի և ճնշման պայմաններում հալեցում: Ոչնչացում է համարվում նաև՝

ա. թաղումը, ստորգետնյա պահեստավորումը կամ կուտակումը,

բ. վերգետնյա այրումը (վառում) վառելանյութի միջոցով բացօթյա պայմաններում,

գ. անմիջական այրումը հատուկ սարքավորումների պայմաններում.

37) անասնահամաճարակային նշանակության կամ անասնաբուժական պետական վերահսկման ենթակա օբյեկտներ՝ անասնապահական ֆերմաները և տնտեսությունները, արոտավայրերը, ջրելատեղերը, անասնագերեզմանոցները, կենդանաբանական այգիները, ակվարիումները, բնական և արհեստական ջրային միջավայրերը, որտեղ բուծվում կամ պահվում են ջրային կենդանիներ, տեռարիումները, վիվարիումները, անասնաբուժական լաբորատորիաները, կենդանիների փոխադրում, կենդանիների նկատմամբ փորձարկումներ, կենդանական ծագման հումք և մթերք, կերեր, լրացակերեր, կերատեսակներ արտադրող, վերամշակող, պահեստավորող, իրացնող, բեղմնավորիչ նյութերի, անասնաբուժական դեղամիջոցների արտադրություն, պահպանում, առևտուր կամ իրացում իրականացնող տնտեսավարող սուբյեկտները և կազմակերպությունները, գյուղատնտեսական և պարենային ապրանքների շուկաները, առևտրի օբյեկտները, կենդանական ծագման կողմնակի արտադրանքի տնօրինման, պահեստավորման կազմակերպությունները, սպանդանոցները, սպանդային կետերը, բնական ծագում ունեցող կենդանական թափոնների տեղադրման և պահման, վնասազերծման վայրերը, կենդանիների շուկաները, կենդանիների կայանատեղերը, հավաքատեղերը, անասնաբուժական կենսապատրաստուկների արտադրության կազմակերպությունները, անասնաբուժական ուսումնական, գիտահետազոտական լաբորատորիաները, կազմակերպությունները, ինչպես նաև այլ հաստատությունները, տարածքները, որտեղ և (կամ) որոնց շրջակայքում վարակիչ կամ մակաբուծային գործոնները կարող են տարածվել.

38) վերամշակում՝ գործունեություն, որի արդյունքում փոփոխության է ենթարկվում կենդանական ծագման հումքի և մթերքի, կենդանական ծագման կողմնակի արտադրանքի պարունակությունը կամ բաղադրությունը՝ վերածվելով սպառման կամ արտադրության համար պիտանի հումքի կամ մթերքի.

39) զոոտեխնիկական նպատակներով կիրառում՝ կենդանիների, բեղմնավորիչ նյութերի, անասնաբուժական դեղամիջոցների օգտագործումը կենդանիների կտղուցը կարգավորելու, սերմնավորման, բեղմնավորման, սաղմերի փոխպատվաստման նպատակով.

40) պայմանական պիտանի կենդանական ծագման հումք և մթերք՝ կենդանական ծագման հումք և մթերք, որոնք կարող են օգտագործվել վնասազերծումն ապահովող վերամշակումից հետո, որը երաշխավորում է դրանց անվտանգությունը:

2. Անասնաբուժության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակում է համապատասխան նախարարությունը:

Հոդված 6. Անասնաբուժության ոլորտում Կառավարության լիազորությունները

(վերնագիրը փոփ. 23.03.18 ՀՕ-288-Ն)

1. Կառավարությունը սահմանում է՝

1) անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների ցանկը.

2) կենդանական ծագման մթերքի հիգիենային ներկայացվող ընդհանուր պահանջները.

3) կերատեսակների հիգիենային ներկայացվող պահանջները.

4) կենդանական ծագման կողմնակի արտադրանքին ներկայացվող պահանջները.

5) կենդանական ծագման մթերքի անվտանգությանը ներկայացվող պահանջները, որոնք ներառում են ինչպես մանրէաբանական, այնպես էլ մակաբուծաբանական և քիմիական ցուցանիշներով անվտանգությունը.

6) անասնաբուժական պետական վերահսկողության ենթակա ապրանքների նմուշառման միասնական ընթացակարգը.

7) *(կետն ուժը կորցրել է 17.12.14 ՀՕ-238-Ն)*

8) *(կետն ուժը կորցրել է 17.12.14 ՀՕ-238-Ն)*

9) տարածքում միասնական անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի կիրառման կարգը.

10) *(կետն ուժը կորցրել է 17.12.14 ՀՕ-238-Ն)*

11) կենդանիների, կենդանական ծագման մթերքի, կերերի, պրեմիքսների ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման կարգը.

12) Եվրոպական միություն, Եվրասիական տնտեսական միություն և այլ երկրներ արտահանվող կենդանական ծագման մթերքում արգելված նյութերը և անասնաբուժությունում օգտագործվող նյութերի մնացորդային առավելագույն քանակությունները.

13) մսի և կենդանիների սպանդից գոյացած մթերքի անասնաբուժասանիտարական փորձաքննության կարգը.

14) *(կետն ուժը կորցրել է 22.05.24 ՀՕ-230-Ն)*

15) ձկան, ջրային կենդանիների ու ձկնամթերքի անասնաբուժասանիտարական փորձաքննության կարգը.

16) կաթի և կաթնամթերքի անասնաբուժասանիտարական փորձաքննության կարգը.

17) մեղրի անասնաբուժասանիտարական փորձաքննության կարգը.

18) ձվի անասնաբուժասանիտարական փորձաքննության կարգը.

19) անասնաբուժական դեղամիջոցների արտահանման ու ներմուծման կարգը.

20) անասնաբուժական դեղամիջոցների գրանցման կարգը.

21) *(կետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-122-Ն)*

22) անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի տրման կարգը.

23) վճարովի անասնաբուժական ծառայությունների մատուցման կարգը.

24) սպանդանոցներին ներկայացվող պահանջները, սպանդանոցների գործունեության կասեցման, սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման և սպանդային մթերքի անասնաբուժական դրոշմման կարգը.

25) կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարում անկած, ոչնչացված կամ սանիտարական սպանդի (հարկադիր մորթի) ենթարկված կենդանիների փոխհատուցման կարգը.

26) գյուղատնտեսական կենդանիների կարանտինի սահմանման և չեղյալ հայտարարման կարգը.

27) անասնահակահամաճարակային միջոցառումների պետական ծրագրում ընդգրկված հիվանդություններից անկած կենդանիների փոխհատուցման կարգը.

28) կենդանիների ոչնչացման կամ հարկադիր մորթի իրականացման պայմանները, դեպքերը և կարգը.

29) կենդանիների, կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների ցանկը.

30) կենդանիների համարակալմանը ներկայացվող պահանջները.

31) անասնաբուժական պետական վերահսկողության ոլորտում էլեկտրոնային տեղեկատվական համակարգի, անասնաբուժական պետական վերահսկողության ենթակա օբյեկտների և երրորդ երկրների տնտեսավարողների վերաբերյալ ռեեստրների վարման կարգը.

32) *(կետն ուժը կորցրել է 08.12.17 ՀՕ-256-Ն)*

33) Հայաստանի Հանրապետությունում գոմաղբի, թռչնաղբի պահեստավորմանը, տեղափոխմանը, վերամշակմանը, օգտագործմանը և վարակազերծմանը ներկայացվող պահանջները.

34) գյուղատնտեսական կենդանիների շուկաներին ներկայացվող պահանջները.

35) անասնազերեզմանոցներին ներկայացվող պահանջները:

2. Կառավարությունը հաստատում է՝

1) անասնաբուժական պետական վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց հանդերձանքի ձևը և կրելու կարգը.

2) կենդանիների կարանտինային, հատուկ վտանգավոր և պարտադիր ծանուցման ենթակա հիվանդությունների ցանկը.

3) կենդանիների կարանտինային, հատուկ վտանգավոր, պարտադիր ծանուցման ենթակա վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերացման ծրագրերը.

3.1) գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումների ծրագիրը.

4) անասնաբուժությունում օգտագործվող նյութերի կենդանական ծագման մթերքում մնացորդային քանակների հսկողության մոնիթորինգային ծրագրերը.

5) անասնաբուժական վերահսկողության ենթակա ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծմանը և Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանմանը ներկայացվող պահանջները.

6) անասնաբուժական վերահսկողության իրականացման ժամանակ ընդունվող ակտերի օրինակելի ձևերը.

7) կենդանիների վարակիչ հիվանդությունների մասին ծանուցման և գրանցման կարգը.

8) Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման ծրագիրը և միջոցառումների կատարման ժամանակացույցը.

8.1) անասնաբուժական գործունեության լիցենզավորման կարգը.

9) անասնաբույժի որակավորում ունեցող մասնագետների վերապատրաստման կարգը:

3. Կառավարությունը ընդունում է սույն օրենքից բխող այլ իրավական ակտեր:

~~Հոդված 34. Տնային կենդանիների պահման պահանջները~~

~~1. Տնային կենդանիների տերերը պարտավոր են՝~~

~~1) ձեռնարկել միջոցառումներ՝ ուղղված մակաբուծային հիվանդությունների դեմ պայքարի համալիրում ներքին և արտաքին մակաբույծների նկատմամբ կենդանիների բուժկանխարգելիչ միջոցառումների իրականացմանը, կանխելով հասարակական վայրերի աղտոտումը կենդանիների արտաթորանքով և ապահովելով կղկղանքից տեղանքի մաքրումը.~~

~~2) ձեռնարկել մարդկանց կամ այլ կենդանիներին չվնասելու միջոցառումներ, այդ թվում՝ առանց դնչկալի կամ վնասազերծման ապահովման դուրս հանելը.~~

~~3) ձեռնարկել կենդանիների անցանկալի վերարտադրությունը կանխող միջոցառումներ.~~

~~4) վերարտադրության նպատակով օգտագործելու դեպքում հաշվի առնել կենդանիների ֆիզիոլոգիական, անատոմիական և վարքագծային առանձնահատկությունները և դրանց առողջությանը վտանգ չհասցնել.~~

~~5) ապահովել պահմանը ներկայացվող անասնաբուժական պահանջների կիրառումը:~~

~~2. Տնային շների տերերը պարտավոր են նաև՝~~

~~1) ցուցահանդեսներին, մրցույթներին մասնակցելու, վաճառքի նպատակով տեղափոխման ընթացքում ունենալ դրանց անասնաբուժական անձնագրերը.~~

~~2) պատվաստումների և մշակումների դեպքում անասնաբուժական ծառայությանը կենդանու հետ ներկայացնել անասնաբուժական անձնագրերը.~~

~~3) կատարել կենդանիների առողջության պահպանման համար պահանջվող պատվաստումները, մակաբույծների դեմ մշակումները.~~

~~4) փակ տարածություններում պահելու դեպքում ապահովել ամենօրյա զբոսանք.~~

~~5) մշտական կապերով (պարաններով) պահելու դեպքում ապահովել ապաստարան և ազատ տեղաշարժման տարածք.~~

~~6) 6 շաբաթականից մեծ հասակի դեպքում ձեռք բերել անասնաբուժական անձնագիր.~~

~~7) 4 ամսական հասակում կամ շուն ձեռք բերելուց հետո՝ 7 օրվա ընթացքում, շանը ներկայացնել անասնաբուժական զննման և իրենց ցանկությամբ շան նույնականացման նպատակով շան վրա դնել դաջվածք կամ տեղադրել միկրոչիպ, որը ներառում է կենդանու տեղակայման տարբերանշանները և անհատական համարը:~~

Հոդված 35. Կենդանիների բարեկեցությունը պահպանելու գործում անձանց պարտականությունները և սահմանափակումները

~~1. Կենդանիների սեփականատեր և (կամ) կենդանի պահող ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են՝~~

~~1) խնամել կենդանիներին և չլքել, եթե այդ կենդանին ինքնուրույն գոյատևել չի կարող, իսկ լքելու դեպքում նախօրոք տեղեկացնել տեղական ինքնակառավարման մարմիններին կամ կենդանիների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին.~~

~~2) յուրաքանչյուր կենդանու համար՝ կախված տեսակից, տարիքից և ցեղատեսակից, ապահովել՝~~

~~ա. տեղակայման և տեղաշարժման համար անհրաժեշտ տարածք, ազատություն և պայմաններ,~~

~~բ. կերի և ջրի բավարար քանակություն,~~

~~գ. սնվելու և խմելու վայրերից օգտվելու ազատ հնարավորություն,~~

~~դ. սնվելու և խմելու համար անհրաժեշտ համապատասխան պարագաներ, որոնք հարմարեցված են կանեցնելու համար դրանց աղտոտումը և նվազեցնելու կենդանիների միջև ագրեսիվ մրցակցությունը,~~

~~ե. կենսագործունեության համապատասխան միկրոկլիմա,~~

~~զ. կենդանիների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում և բուժում, հիվանդացության կամ վնասվածքի դեպքում՝ անմիջական բուժօգնություն,~~

~~է. կենդանիների պաշտպանության և բարեկեցության պահանջները.~~

~~3) ձեռնարկել միջոցներ կենդանիների՝ բարձրություններից ընկնելը կանխելու համար.~~

~~4) օրական առնվազն մեկ անգամ ստուգել կենդանիների ընդհանուր վիճակը.~~

~~5) տան պայմաններում չպահվող վայրի կենդանիներ բուծել ոչ իրենց բնական միջավայրերում՝ միայն կենդանաբանական այգիներում, ակվարիումներում, տեռարիումներում, կրկեսներում, ֆերմաներում, վիվարիումներում (կենդանանկեցարան, թռչունների կացարան):~~

2. Արգելվում է՝

~~1) կենդանիներին վախեցնել, տանջել, ուժասպառ անել, սպանել, բացառությամբ կրոնական ծիսակատարությունների, որսորդության և ձկնորսության, գիտահետազոտության համար նախատեսված կենդանիների և մարդկանց վրա հարձակման և ինքնապաշտպանության դեպքերի.~~

~~2) կենդանիների նկատմամբ դաժանությունը՝~~

~~ա. կենդանուն սպանդի ենթարկելը՝ խեղդելու, կախելու, մասնատման, ուժեղ հարվածի կամ մտրակման միջոցով,~~

~~բ. մաշկահանում, անդամատում կամ դիազերծում՝ մինչև սպանդը,~~

~~գ. կրակի վրա նետելը, դաժան միջոցներ կիրառելը, բարձրությունից կամ փոխադրամիջոցներից նետելը,~~

~~դ. թունավորում կամ այնպիսի նյութի ներարկում, որը հանգեցնում է դաժան և ցավոտ մահվան,~~

~~ե. սույն օրենքի դրույթները խախտելով՝ քնեցումը.~~

~~3) կռիվների կամ ներկայացումների համար կենդանիների օգտագործումը, որի արդյունքում կենդանին կարող է տանջվել, սպանվել կամ ստանալ կենսագործունեությանը սպառնացող վնասվածք.~~

~~4) կենդանիներին միմյանց նկատմամբ սադրելը.~~

~~5) կենդանիների այնպիսի վարժեցում, որը կարող է տանջանք կամ չարչարանք առաջացնել.~~

~~6) առանց կենդանիների անատոմիական և ֆիզիոլոգիական կարողությունները հաշվի առնելու՝ դրանց ենթարկել ֆիզիկական ճնշումների.~~

~~7) կենդանիների այնպիսի հավաք կամ բռնում, որը նրանց ցավ, տանջանք կամ վնաս է պատճառում, եթե առկա են դրանք բացառող կամ հնարավորինս նվազեցնող պայմաններ.~~

~~8) վայրի կենդանիներին փողոցով տանելը՝ առանց շրջապատի անվտանգությունը երաշխավորող պայմանների ապահովման.~~

9) անհրաժեշտ որակավորում և մասնագիտություն չունեցող անձանց կողմից կենդանիների բուժումը կամ անասնաբուժական դեղամիջոցի կիրառումը.

~~10) ցավազրկող նյութերի կամ այնպիսի նյութերի կիրառումը, որոնք կարող են կենդանիների առողջությանը վնասել, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք բժշկական~~

~~հիմնավորում ունեն և (կամ) թույլատրված փորձարկման շրջանակներում կատարվելիք բուժում են հանդիսանում.~~

~~11) սպորտային առավել արդյունքների ստացման նպատակով կենդանիների նկատմամբ խթանիչ նյութերի կիրառումը.~~

12) բնական կամ արհեստական սերմնավորումը, որը կենդանիների առողջության համար վտանգավոր է.

13) կենդանիներին կերակրել այնպիսի կերատեսակներով, որոնք պարունակում են վնասակար նյութեր, կամ չեն օգտագործվում տվյալ կենդանու կերակրման համար՝ ելնելով դրանց տեսակից, տարիքից և առողջական վիճակից.

~~14) անհամատեղելի տեսակների միևնույն տարածքում կամ միևնույն տարածքում միևնույն տեսակների բնակեցումը, որոնց միջև կարող է առաջանալ ագրեսիվություն, հարձակում և պայքար.~~

15) խոշոր որոճողների կամ միասմբակավորների պոչերի անդամատումը.

16) հետևյալ վիրաբուժական մանիպուլյացիաների իրականացումն առանց ցավազրկման՝

~~ա. զառների, ուլերի, խոզերի, հորթերի և շների պոչերի անդամատում,~~

ա. գառների, ուլերի, խոզերի, հորթերի պոչերի անդամատումը,

~~բ. շների հավելյալ մատների անդամահատում,~~

գ. հորթերի եղջյուրների անդամահատում խարման կամ վիրաբուժական հեռացման միջոցով,

դ. կենդանիների ամորձատում և ձվարանահատում։.

~~17) տնային կենդանիների նկատմամբ առանց ցավազրկման հետևյալ վիրաբուժական միջամտությունների իրականացումը՝~~

~~ա. պոչի և ականջների կտրում,~~

~~բ. ձայնալարերի կտրում,~~

~~գ. եղունգների և ատամների հեռացում,~~

~~դ. դաջվածքի կամ միկրոչիպի տեղադրում,~~

~~ե. վիրահատություններ.~~

~~18) տնային կենդանիներին բուծել և պահել մսի և մորթու արտադրության նպատակով.~~

~~19) տնային կենդանիներին զբոսանքի հանել բացօթյա մանկապարտեզներ և արգելանշաններով նշված տարածքներ։~~

ՏԵՂԵԿԱՆՔ

«*ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ*» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված **45.** Համայնքի ղեկավարի լիազորություններն առևտրի և ծառայությունների բնագավառում

1. Համայնքի ղեկավարն առևտրի և ծառայությունների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1) օրենքով սահմանված կարգով հսկողություն է իրականացնում առևտրի և հանրային սննդի ոլորտում.

2) օրենքով նախատեսված դեպքերում տալիս է ոգելից խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում` ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտի արտադրատեսակների իրացման թույլտվություն.

3) տալիս է համայնքի տարածքում բացօթյա վաճառք, տոնավաճառներ կազմակերպելու թույլտվություն.

4) տալիս է համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն.

5) համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին տալիս է ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն.

6) Հայաստանի Հանրապետության կառավարություն առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման տարեկան ծրագրում համայնքի մասնակցության մասին.

7) համայնքի տարածքում տալիս է թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառքի թույլտվություն.

8) տալիս է համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն.

9) տալիս է համայնքի տարածքում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն.

10) ***(կետն ուժը կորցրել է 13.07.23 ՀՕ-261-Ն)***

11) տալիս է համայնքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների գործունեության թույլտվություն.

12) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգին ու պայմաններին համապատասխան տալիս է արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն.

13) տալիս է համայնքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց` տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվություններ.

14) ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու կամ առանց համապատասխան թույլտվության իրականացված բացօթյա առևտրի դեպքում կիրառվում է առևտրի իրականացման և ծառայությունների մատուցման առարկաների առգրավում: Համայնքի ղեկավարի որոշմամբ սույն մասով սահմանված առգրավելու իրավասությունը կարող է վերապահվել աշխատակազմի համապատասխան պաշտոնատար անձին.

15) տալիս է համայնքի տարածքում շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման թույլտվություն.

16) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի համաձայն՝ որոշում է ընդունում շրջիկ առևտրի իրականացման համար նախատեսված թույլատրելի վայրերը գծանշելու և համապատասխան նշանով կահավորելու վերաբերյալ.

17) տալիս է համայնքի տարածքում կենդանիների վաճառքի թույլտվություն.
18) տալիս է կենդանիների մասնակցությամբ միջոցառումների, ցուցադրությունների, մրցույթների կազմակերպման թույլտվություն:»:

Հոդված 49. Համայնքի ղեկավարի լիազորությունները գյուղատնտեսության բնագավառում

1. Համայնքի ղեկավարը գյուղատնտեսության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1) կատարում է համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործումը, դրանց շինարարությունը և վերանորոգումը.

~~2) համաքաղաքային կանոններին համապատասխան՝ տալիս է քաղաքի տարածքում տնային կենդանիներ պահելու թույլտվություն և կատարում է դրանց ամենամյա հաշվառում.~~

3) իրականացնում է համայնքի գյուղատնտեսական ռեսուրսների հաշվառում, որի կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

4) իրականացնում է գյուղատնտեսական զարգացման ծրագրեր, աջակցում է գյուղատնտեսության ոլորտում պետական միջոցներով և այլ միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի կազմակերպմանն ու իրականացմանը:

Հոդված 50. Համայնքի ղեկավարի լիազորությունները անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում

1. Համայնքի ղեկավարը անասնաբուժության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունը.

1) լիազոր մարմնին տրամադրում է կատարված անասնահակահամաճարակային միջոցառումների, հայտնաբերված վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ տեղեկատվություն.

2) ապահովում է անասնաբուժական ծառայության գործունեության կազմակերպումը՝ համայնքն սպասարկող անասնաբույժի միջոցով:

2. Համայնքի ղեկավարը անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները.

1) աջակցում է անասնահակահամաճարակային տարեկան միջոցառումների պետական ծրագրի իրականացման աշխատանքներին.

2) անասնահամաճարակային իրավիճակից ելնելով՝ ըստ վարակման ռիսկի, սահմանազատում է արոտավայրերը և ջրելատեղերը՝ անհրաժեշտության դեպքում սահմանափակելով կամ արգելելով դրանց օգտագործումը.

3) աջակցում է անասնաբուժական ծառայության աշխատանքներին.

4) աջակցում է համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի վնասակար օրգանիզմների դեմ պայքարի աշխատանքներին.

5) աջակցում է համայնքի տարածքում բուսասանիտարական հաշվառման աշխատանքներին, անհրաժեշտության դեպքում բուսասանիտարիայի բնագավառի լիազոր մարմնին է տրամադրում հողօգտագործողների վերաբերյալ տվյալներ.

6) աջակցում է համայնքի տարածքում հայտարարված կարանտին գոտում կատարվող աշխատանքներին.

7) սահմանում է համայնքի տարածքում անկած կենդանիների դիակների հավաքման, ոչնչացման և թաղման վայրերը:

Հոդված 50.1 Համայնքի ղեկավարի լիազորությունները կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում

1. Համայնքի ղեկավարը կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում
իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1) կազմակերպում է համայնքի տարածքում թափառող կենդանիների բռնման, կենդանիների կացարաններ տեղափոխման աշխատանքները.
2) սահմանված կանոններին համապատասխան՝ տալիս է ~~քաղաքի~~ համայնքի տարածքում տնային կենդանիներ պահելու թույլտվություն և կատարում է դրանց ամենամյա հաշվառում.
3) իրականացնում է համայնքի տարածքում պահվող կենդանիների նույնականացման անձնագրերի տրամադրումը և աջակցում է անասնաբուժական գրանցամատյանների աշխատանքների վարումը.
4) սահմանված կարգով տրամադրում է կենդանիների բուծարանների և կացարանների գործունեության թույլտվություններ.
5) երեքից ավել շուն պահելու համար տալիս է համաձայնություն:

2. Համայնքի ղեկավարը «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1. օրենքով սահմանված կարգով իրականացնում է անխոչընդոտ վերահսկողություն և ստուգումներ կենդանիների պահման բոլոր վայրերում.

2. կենդանի տիրապետողից պահանջում և ստանում է կենդանի պահելուն առնչվող ցանկացած տեղեկատվություն, բացատրություններ և փաստաթղթեր:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»

Հոդված 58.1 Քաղաքապետի լիազորությունները կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում

1. Քաղաքապետը կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1) կազմակերպում է համայնքի տարածքում թափառող կենդանիների բռնման և կացարաններ տեղափոխման աշխատանքները.
2) համաքաղաքային կանոններին համապատասխան՝ տալիս է քաղաքի տարածքում տնային կենդանիներ պահելու թույլտվություն և կատարում է դրանց ամենամյա հաշվառում.
3) իրականացնում է Երևանի տարածքում պահվող կենդանիների նույնականացման անձնագրերի տրամադրումը և աջակցում է անասնաբուժական միջոցառումների գրանցամատյանների աշխատանքների վարմանը.
4) սահմանված կարգով տրամադրում է կենդանիների բուծարանների և կացարանների գործունեության թույլտվություններ.
5) սահմանում է Երևանի տարածքում անկած կենդանիների դիակների հավաքման, ոչնչացման և թաղման վայրերը.
6) երեքից ավել շուն պահելու համար տալիս է համաձայնություն:

2. Քաղաքապետը «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1) օրենքով սահմանված կարգով իրականացնում է անխոչընդոտ վերահսկողություն և ստուգումներ կենդանիների պահման բոլոր վայրերում.
2) կենդանու տիրապետողից պահանջում է կենդանու պահելուն առնչվող ցանկացած տեղեկատվություն, բացատրություններ, փաստաթղթեր:»:

Հոդված 96. Վարչական շրջանի ղեկավարի լիազորությունները առևտրի և սպասարկման բնագավառում

1. Վարչական շրջանի ղեկավարը առևտրի և սպասարկման բնագավառում իրականացնում է հետևյալ լիազորությունները.

1) վարչական շրջանի տարածքում, առևտրի համայնքային կանոններին համապատասխան, տալիս է ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն.

2) վարչական շրջանի տարածքում, սպասարկման գործունեության համաքաղաքային կանոններին համապատասխան, բաղնիքներին, սաունաներին, զվարճանքի օբյեկտներին տալիս է ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն.

3) վարչական շրջանի տարածքում, հանրային սննդի համայնքային կանոններին համապատասխան, տալիս է հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն.

4) վարչական շրջանի տարածքում, սահմանված կանոններին համապատասխան, տալիս է կենդանիների վաճառքի թույլտվություն.

5) վարչական շրջանի տարածքում տալիս է կենդանիների մասնակցությամբ միջոցառումների, ցուցադրությունների, մրցույթների կազմակերպման թույլտվություն:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 9. Տեղական տուրքերի տեսակները

1. Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ տեսակները.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

1.1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների (բացառությամբ Երևան քաղաքի վարչական սահմաններից դուրս կառուցվող անհատական բնակելի տների, ինչպես նաև Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների) շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման համար.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար.

4) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար.

4.1) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար.

4.2) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար.

5.1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական

ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար.

5.2) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար.

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար.

9) օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար.

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար.

12) համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար.

13) քաղաքային բնակավայրերումհամայնքի վարչական տարածքում ավագանու որոշմամբ, սահմանված կարգին համապատասխան, տնային կենդանիներ պահելու թույլտվության համար.

13.1) մասնագիտացված խանութներում կամ հատկացված բացօթյա տարածքներում կենդանիների վաճառքի թույլտվության համար.

13.2) կենդանիների մասնակցությամբ միջոցառումների, ցուցադրությունների, մրցույթների կազմակերպման թույլտվության համար.

13.3) կենդանիների բուծարանների և կացարանների գործունեության թույլտվությունների համար.

14) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների.

15) համայնքների կամ համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար.

16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար.

17) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար.

18) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար.

19) *(կետն ուժը կորցրել է* ***13.07.23 ՀՕ-263-Ն****)*

20) համայնքի տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար.

21) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման թույլտվության համար.

22) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին Երևան համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ շրջածախ առևտրի իրականացման թույլտվության համար.

23) համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) սեզոնին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար.

24) համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոնին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար:

Հոդված 12. Տեղական տուրքերի դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

- Երևան քաղաքի վարչական սահմաններում կառուցվող՝ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների համար՝ տասնհինգ հազար դրամի և կառուցվող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տան կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն կետի «բ» ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- Երևան քաղաքի վարչական սահմաններից դուրս կառուցվող՝ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների համար՝ տասնհինգ հազար դրամ,

- մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված և Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերից տարբերվող բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների) համար՝

- 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն կետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100 հազար դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն կետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 200 հազար դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն կետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ միլիոն դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար մեկ միլիոն դրամի հանրագումարի ու սույն կետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը:

Սույն կետի համաձայն՝ շենքերի և շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքի դրույքաչափի հաշվարկման նպատակով հիմք են ընդունվում Կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականությանը համապատասխանող հետևյալ գործակիցները.

Գոտի	Գոտիականության գործակից
1-4	5.0

5-8	4.0
9-12	3.0
13-16	2.0
17-20	1.0

գ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված և Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների համար՝

- 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,

- 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,

- 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,

- 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ,

դ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամի և սույն կետի «բ» ենթակետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 10 հազար դրամի և սույն կետի «բ» ենթակետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը.

1.1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների (բացառությամբ Երևան քաղաքի վարչական սահմաններից դուրս կառուցվող անհատական բնակելի տների, ինչպես նաև Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների) շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար (եթե սույն հոդվածի 4.1-ին մասով այլ բան սահմանված չէ)՝

ա. Երևան քաղաքի վարչական սահմաններում կառուցվող՝ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝ երեսուն հազար դրամի և կառուցվող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տան կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն մասի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

բ. այլ շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների, ինչպես նաև Երևան քաղաքի վարչական սահմաններում կառուցվող՝ 300 քառակուսի մետրից ավել ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի տան) շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝

- 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների կամ 300-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող՝ Երևան քաղաքի վարչական սահմաններում կառուցվող անհատական բնակելի տների համար՝ վաթսուն հազար դրամի և շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն մասի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների և Երևան քաղաքում կառուցվող անհատական բնակելի տների համար՝ 200 հազար դրամի և շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն մասի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների և Երևան քաղաքում կառուցվող անհատական բնակելի տների համար՝ 400 հազար դրամի և շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն մասի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների և Երևան քաղաքում կառուցվող անհատական բնակելի տների համար՝ երկու միլիոն դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար երկու միլիոն դրամի հանրագումարի ու սույն մասի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված՝ շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ

շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

4.1) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

4.2) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

5.1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

5.2) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում

տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ.

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տասը հազար մեկ դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամից մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր մեկ հազար դրամ.

բ. օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տասը հազար մեկ դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամից մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր հազար մեկ դրամ.

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազարից մինչև հիսուն հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազարից մինչև հարյուր հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազարից մինչև մեկ միլիոն դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազարից մինչև հարյուր հիսուն հազար դրամ.

12) համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամից մինչև հինգ հազար մեկ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար մեկ դրամից մինչև տասը հազար մեկ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասնհինգ հազար մեկ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար մեկ դրամից մինչև երեսուն հազար մեկ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար մեկ դրամից մինչև հիսուն հազար մեկ դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամից մինչև հազար մեկ դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար մեկ դրամից մինչև երկու հազար մեկ դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար մեկ դրամից մինչև չորս հազար մեկ դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար մեկ դրամից մինչև ութ հազար մեկ դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար մեկ դրամից մինչև տասնհինգ հազար մեկ դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ.

13) ~~քաղաքային բնակավայրերում~~համայնքի վարչական տարածքում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հազար դրամ.

13.1) մասնագիտացված խանութներում կամ հատկացված բացօթյա տարածքներում կենդանիների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ.

13.2) կենդանիների մասնակցությամբ միջոցառումների, ցուցադրությունների, մրցույթների կազմակերպման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսան հազարից քառասուն հազար դրամ.

13.3) կենդանիների բուծարանների և կացարանների գործունեության թույլտվությունների համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

14) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

15) Հայաստանի Հանրապետության համայնքների կամ համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով

գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

17) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

18) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ.

19) ***(կետն ուժը կորցրել է 13.07.23 ՀՕ-263-Ն)***

20) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների (բացառությամբ հեստապարային ակումբների) համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տասը հազարից մինչև քսան հազար ՀՀ դրամ, իսկ Երևան քաղաքում՝ երեսուն հազարից մինչև հիսուն հազար ՀՀ դրամ,

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում հարյուր հազարից մինչև երեք հարյուր հազար ՀՀ դրամ, իսկ Երևան քաղաքում՝ երեք հարյուր հազարից մինչև հինգ հարյուր հազար ՀՀ դրամ.

21) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման թույլտվության համար՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ քսան հազարից մինչև հիսուն հազար դրամ.

22) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին Երևան համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ շրջածախ առևտրի իրականացման թույլտվության համար՝ մեկ անձի համար՝ օրական հինգ հարյուր դրամ.

23) համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար՝ 10 (տասը) հազար դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

2. Սույն հոդվածով սահմանված դրույքաչափերը գյուղական բնակավայրերում համայնքի ավագանու որոշմամբ կարող են հաշվարկվել 0.3, 0.5 կամ 0.75 գործակիցների

կիրառմամբ, քաղաքային բնակավայրերում՝ 0.5 կամ 0.75 գործակիցների կիրառմամբ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերի:

3. Սույն հոդվածով սահմանված դրույքաչափերը քաղաքային բնակավայրերում համայնքի ավագանու որոշմամբ կարող են սահմանվել 1.5 անգամ, իսկ Երևան քաղաքում՝ 3.0 անգամ ավելի, բացառությամբ 1-ին մասի 1-ին, 1.1-ին, 2-րդ և 3-րդ կետերի:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 1.1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային բնակավայրերի համար կարող են հաշվարկվել 0.3, գյուղական այլ բնակավայրերի համար՝ 0.5, քաղաքային այլ բնակավայրերի համար՝ 1.0-3.0, իսկ Երևան քաղաքում՝ 1.0-7.0 գործակիցների կիրառմամբ:

4.1. Անկախ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված գործակիցների կիրառությունից՝ շինարարության թույլտվության ժամկետները շինարարության թույլտվությամբ սահմանված՝ շինարարության ժամկետի մինչև 20 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով առաջին անգամ երկարաձգելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասի 1. 1-ին կետով սահմանված տեղական տուրքի դրույքաչափը հաշվարկվում է 0. 5 գործակցի կիրառմամբ: Շինարարության թույլտվության ժամկետների հաջորդ երկարաձգումների դեպքում (անկախ երկարաձգվող ժամկետների տևողությունից) շինարարության թույլտվության երկարաձգման համար տեղական տուրքը հաշվարկվում է սույն հոդվածի 1-ին մասի 1. 1-ին կետով սահմանված դրույքաչափերով:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափը Երևան քաղաքում՝ ավագանու որոշմամբ, ըստ գոտիավորման, կարող է սահմանվել մինչև 5.0 անգամ, իսկ «բ» ենթակետով սահմանված դրույքաչափը՝ մինչև 10.0 անգամ ավելի:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՄԱՍԻՆ

Հոդված 145. Կենդանիներ

~~Կենդանիների նկատմամբ կիրառվում են գույքի մասին ընդհանուր կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ այլ իրավական ակտերով:~~

1. Կենդանիների նկատմամբ կիրառվում են գույքի մասին ընդհանուր կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ այլ իրավական ակտերով:

2. Իրավունքներն իրացնելիս կենդանիների նկատմամբ արգելվում է «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի սկզբունքներին հակասող վերաբերմունքը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված **43.** Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկը

1. Գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա, եթե այն ընդգրկված է սույն հոդվածի աղյուսակում:

2. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակ

Հ/հ	Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը	Լիցեն-զավորող մարմինը	*(սյունակը հանվել է **13.11.15 ՀՕ-121-Ն**)*	Ոլորտ	Փորձա-քննու-թյան պահանջ	Մրցու-թային կար-գով	Որակա-վորման պահանջ	Հաշվե-տվու-թյան պահանջ	Վայրի պա-հանջ
1	2	3	4	5	6	7	8	9	10
	1. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների արտադրություն, ներմուծում կամ արտահանում (բացառությամբ ռազմական նշանակության արտադրանք հանդիսացող նյութերի և պայթեցման սարքավորումների, ռազմական նշանակության արտադրանք հանդիսացող արտադրատեսակների)	ԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
2.	Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առնտուր, պահեստավորում կամ տեղափոխում	ԿՄ		-		-	Ո	Հ	Վ
2.1.	Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների կիրառում կամ պայթեցման աշխատանքների կատարում	ԿՄ		-		-	Ո	Հ	-
2.2.	Հրագործական արտադրատեսակների արտադրություն, ներմուծում կամ արտահանում	ԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
2.3.	Հրագործական արտադրատեսակների առնտուր (իրացում), պահեստավորում կամ տեղափոխում (բացառությամբ կենցաղային նշանակության հրագործական	ԿՄ		-		-	Ո	Հ	Վ

	արտադրատեսակների I և II դասերի, որոնց մասով լիցենզավորման պահանջը վերաբերում է միայն պահեստավորմանը և տեղափոխմանը)								
2.4.	Հրագործական արտադրատեսակների կիրառում (շահագործում) (բացառությամբ կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների I և II դասերի)	ԿՄ		-		-	Ռ	Հ	-
3.	*(ենթակետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)*								
4.	Քաղաքացիական և ծառայողական զենքի արտադրություն	ԿՄ		-	Փ	-	Ռ	Հ	Վ
5.	Քաղաքացիական և ծառայողական զենքի առևտուր	ԿՄ		-	Փ	-	-	Հ	Վ
6.	Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դրանց պրեկուրսորների արտադրություն	ԿՄ		-	Փ		Ռ	Հ	Վ
7.	Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դրանց պրեկուրսորների ներմուծում, արտահանում կամ մեծածախ առևտուր	ԿՄ		-	Փ	-	Ռ	Հ	Վ
7.1.	Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործում գիտական և ուսումնական նպատակներով	ԿՄ		-	Փ	-	Ռ	Հ	Վ
7.2.	Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործմամբ փորձաքննության անցկացում	ԿՄ		-	Փ	-	Ռ	Հ	Վ
7.3.	Արտադրական կանեփի արտադրություն	ԿՄ		-	Փ	-	Ռ	Հ	Վ
7.4.	Արտադրական կանեփի ներմուծում, արտահանում կամ մեծածախ առևտուր	ԿՄ		-	Փ	-	Ռ	Հ	Վ
7.5.	Մեկուսացված համակարգում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածություն (ներառյալ՝ ներմուծումը, արտահանումը)	ԿՄ	-	-	-	-	-	-	Վ
8.	Ռազմական նշանակության արտադրանքի ներմուծում և արտահանում	ԿՄ		-	Փ	-	-	Հ	-
9.	Ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրում	ԿՄ		-	Փ	-	-	Հ	-
10.	Ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեություն (ռազմական նշանակության արտադրանքի առևտրի գործընթացում այլ անձանց համար պայմանագրերի կնքման բանակցությունների վարման, ինչպես նաև այդ արտադրանքի ձեռքբերման, փոխանցման և վաճառքի օժանդակման ծառայությունների մատուցում)	ԿՄ		-	-	-	-	Հ	-
11.	Մասնավոր պահնորդական գործունեություն	ԿՄ		-	-	-	Ռ	-	-

12.	Ռազմական նշանակության արտադրանքի արտադրություն	ԿՄ		-	Փ	-	Ռ	Հ	Վ
13.	Հրաձգարանի գործարկում	ԿՄ		-	Փ	-	Ռ	Հ	Վ
14.	Զենքի հարդարում	ԿՄ		-	Փ	-	Ռ	Հ	Վ
	2. *(բաժինն ուժը կորցրել է* 27.10.17 *ՀՕ-169-Ն)*								
	3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Դեղերի արտադրություն	ԿՄ			Փ	-	Ռ	Հ	Վ
2.	Դեղատնային գործունեություն	ԿՄ		-	-	-	Ռ	Հ	Վ
3.	Բժշկական օգնության և սպասարկման իրականացում	ԿՄ		-	-	-	Ռ	-	Վ
3.1	Ֆիզիկական անձի կողմից անհատական լիցենզիայի կամ անցումային անհատական լիցենզիայի հիման վրա մասնագիտական գործունեության իրականացում	ԿՄ	-	-	-	-	Ռ	-	-
4.	*(կետն ուժը կորցրել է* 25.10.17 *ՀՕ-159-Ն)*								
5.	*(կետն ուժը կորցրել է* 19.06.13 *ՀՕ-84-Ն)*								
6.	Դեղերի մեծածախ իրացում	ԿՄ		-	Փ	-	Ռ	Հ	Վ
7.	Բժշկական արտադրատեսակների արտադրություն	ԿՄ			Փ	-	Ռ	Հ	Վ
8.	Բժշկական արտադրատեսակների սպասարկում	ԿՄ			Փ	-	Ռ	Հ	
	4. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	*(կետն ուժը կորցրել է* 25.03.20 *ՀՕ-180-Ն)*								
2.	Արտարժույթի առուվաճառք	ԿԲ		-	-	-	Ռ	Հ	Վ
3.	Արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպում	ԿԲ		-	-	-	Ռ	Հ	Վ
	5. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Ներդրումային ծառայությունների մատուցում՝ ըստ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ներդրումային ծառայությունների տեսակների	ԿԲ		-	-	-	Ռ	Հ	-
2.	Կարգավորվող շուկայի օպերատորի գործունեություն	ԿԲ		-	Փ	-	Ռ	Հ	-
3.	Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեություն	ԿԲ		-	Փ	-	Ռ	Հ	-
	6. ԲԱՆԿԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Բանկային գործունեություն	ԿԲ		-	Փ	-	Ռ	Հ	-
2.	Գրավատների կազմակերպում	ԿԲ		-	-	-	-	Հ	Վ
3.	Ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն	ԿԲ		-	-	-	Ռ	Հ	-

4.	Կյանքի ապահովագրության իրականացում՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դասերով և ենթադասերով	ԿԲ		-	Փ	-	Ո	Հ	-
5.	Ոչ կյանքի ապահովագրության իրականացում՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դասերով և ենթադասերով	ԿԲ		-	Փ	-	Ո	Հ	-
6.	Ինկասացիոն ծառայությունների մատուցում	ԿՄ		-	-	-	Ո	-	-
7.	Վարկային բյուրոյի գործունեություն	ԿԲ		-	-	-	-	Հ	-
8.	Ապահովագրական բրոքերային գործունեություն	ԿԲ		-	-	-	Ո	Հ	-
9.	Վարկային կազմակերպության գործունեություն	ԿԲ		-	-	-	Ո	Հ	-
10.	Դրամական (փողային) փոխանցումների իրականացում	ԿԲ		-	-	-	Ո	Հ	-
11.	Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի և քլիրինգի իրականացում	ԿԲ		-	-	-	Ո	Հ	-
12.	Կյանքի վերաապահովագրության իրականացում	ԿԲ		-	Փ	-	Ո	Հ	-
13.	Ոչ կյանքի վերաապահովագրության իրականացում	ԿԲ		-	Փ	-	Ո	Հ	-
14.	Կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցում՝ ըստ «Կրիպտոակտիվների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կրիպտոակտիվներով ծառայությունների տեսակների	ԿԲ	-	-	-	-	-	Հ	-
	7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	***(կետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)***							
	7.1 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
